

Wunder

Landwirtschaft

891.715
U-22

1917-93
5-22

Օ նուէ օ մանուկ ներին օ

ՀՅՈՒ

Այ

ՀԵՔԵԱԹՆԵՐ

ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐԵԱԿԻ

ԼՈՒՍԱՏՏԻԿՆԵՐ

Փ ռ ի ս ա ղ ը ե ց

կ. կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ



Թ Ի Ֆ Լ Ի Զ

ԷԼՔԵՐԱԿԱՐԴ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ՊՈԼԻՑ. 7.

1907

(95)

0121-570526

891.71-93

Մ- 92

ՀԵՔԵԱԹՆԵՐ

30 MAY 2011

ՄԱՄԻՆ-ՍԻՐԻՐԵԱԿԻ

ԼՈՒԱՎԱՏՏԻԿՆԵՐ

1002
5802
1



Փ թ ի ս դ ր ե ց

կ. կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

178

Թ Ի Ֆ Լ Ի Ս
ԵԼԵՔՏՐԱԿԱՐ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՏ. 7
1907 (95)

24.06.2013

3905

ԹԱՅԱԿ ՕԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԴՐԱՄԱԿԱՆԱԳՈՐԾ



ՅԱՅԱԿ ԱՅԱ

(6)

ՏՕՒ

ՀԵՔԵԱՅ

ԶՐԱՄԱՐԴ ՊԱՊԻ ՄԱՍԻՆ



Ա.

ոքրիկ յաւերժահարսը երկար
խաղում էր լուսատտնիկով
և ուրախ ծիծաղում։ Ահ,
ինչպէս ծիծաղաշարժ է, կա-
սես կանաչ կրակ լինի. այս
ասելով պնդացրեց նրան իր
մազերի մէջ ու նայեց ջրին,
ինչպէս նայում են հայելու մէջ։ Այս էլ ծի-
ծաղաշարժ թուաց յաւերժահարսին. յետոյ յան-
կարծ մի ձանձրոյթ եկաւ վրան ու հարցրեց.

- Լուսատտնիկ, անունդ ի՞նչ է։
- Գիշերավառ. իսկ քո անունը։
- Զրամանուկ, այս անունով է ինձ կան-
չում Զրապապը։ Արի նրան հիւր գնանք։

— Մեծ ուրախութեամբ: Այստեղից մօտ է,
չէ:

— Շատ մօտ, միքանի քայլ: Նա շատ բարի է, Այծամարդի նման չէ, որ վախեցնում է ամենքին:

— Այծամարդն էլ չար չէ, Զրամանուկ, միայն սիրում է կատակներ անել: Միակ պակասութիւնը նրա չափազանց հոհուալն է...

Զրապապը ապրում էր լճի ամենախուլ ծայրում, որտեղից անանուն գետակն էր հոսում: Յաւերժահարսը հեռուից տեսաւ նրան:

— Լուսատնիկ, տեսնո՞ւմ ես Զրապապին.

— Ոչինչ չեմ տեսնում, բայց նկատում եմ, որ մշուշի պէս մի բան է բարձրանում...

— Հէնց գա Զրապապը ինքն է, նա ամպի պէս ճերմակ է...

Երբ լողալով աւելի մօտեցան, լուսատնիկը յիրաւի տեսաւ Զրապապի երկայն բոլորովին ճերմակ մօրուսը, որ մշուշինման տարուբերումէր, տեսաւ և նրա գլխի ճերմակ մաղերը, կապոյտ ու մեծ բարի աշքերը: Զրապապն էլ տեսաւ փոքրիկ յաւերժահարսին: Բարի ծերուկը քանի օր էր, որ բարկացած էր. այժմ ուրախ էր զուարթ Զրամանուկի հետ տակից գլխից խօսելու:

— Բարնվ, պապիկ:

— Բարնվ, թոռնիկ:

— Պապիկ, քեզ համար ընծայ եմ քերեւ:



— Շնորհակալ եմ, թոռնիկս:

Զրմանուկը իր լուսատանիկը տուեց Զրապապին ու արծաթի զանգակի հնչիւնով կրկըշաց: Ծերունին նայեց լուսատանիկին ու ասաց.

— Է՞հ, ես էլ ասեմ ինչ չտեսնուած բան պիտի լինի: Դուք էլ բան չունիք, դատարկ բաներով էք զբաղւում:

— Պապիկ, սիրելիս, մի բարկանար, չէ՞ որ դու մեր բարի ծերուկն ես, իսկ լուսատանիկը այնպէս ծիծաղաշարժ է. թող, բո մօրուսին նստացնեմ...

— Դաղարիր, խեղկատակ. ձեր բանն ու գործը կատակ անել ու զուարճանալն է. Ես ժամանակ չունիմ...

— Գիտես պապիկ, Այծամարդը երեկ մեզ վրայ լուսատափներ թափելով լաւ վախեցրեց:

— Այն, գիտեմ, նա էլ բան ու գործ չունի. աննպատակ պտտում է անտառում և զանազան բաներ հնարում...

— Իսկ դու, պապիկ, այնուամենայնիւ մի չարանար: Քանի օր է, որ դու չարանում ես, լճի ջուրը տակն ու վրայ է լինում. երբ դու բարկացած ես...

— Ինչպէս չբարկանամ, թոռնիկս... Որսորդները եկել են իմ լիճը, իմ բագերը կոտորել, եղեգնուար տրորել, խոտը ոտի տակ տուել, իսկ ես պէտք է նրանցից յետոյ մճեճուածները կար-

զի բերեմ։ Ով որ էլ լինի իմ տեղ, կըքարկանայ։
— Ահ, ինչպէս սարսափելի էք, յիշեց Զրա-
մանուկը։ Նրանք ձեռներին որոտ ու կայծակ
ունէին... Մենք բոլոր ժամանկ եղեգների մէջ
թագ էինք կացել։

— Բայց ես էլ նրանց լաւ վախեցրի, թոռ-
նիկս։ Երկու անգամ նաւակը շուռ տուի, որ-
սորդներից մէկի ոտից բռնած՝ եղեգների մէջ
քարշ տուի... Եթէ երկրորդ անգամ գան, դեռ
շատ բանել կանեմ։

— Ես էլ տեսայ նրանց. բարակ ձայնով ա-
սաց լուսատտնիկը։

— Տեսել ես ու լոիր. խօսքը կտրեց Զրա-
պապը։ Յիշելուց մարդու զգուանքն է գալիս։

Զրամանուկը նստեց ափին, ոտները մինչև
ծունկը կախեց ջրի մէջ ու հառաչելով ասաց.

— Ահ, պապիկս, ինչպէս ձանձրալի է։
Մենք ամեն ինչ անում ենք, որ ուրախ անցնի—
և երգում ենք և պարում և լճի վրայ լողում,
բայց դարձեալ ձանձրալի է. այնպէս ձանձրա-
լի է, որ մինչև անգամ ամեն մի ճիճու տեսնե-
լու ուրախ ենք...։

— Իսկ ես ձանձրանալու ժամանակ չունիմ,
խստութեամբ պատասխանեց Զրապապը, մօ-
րումը սղալելով։ Ահագին գործ կայ, էլ որտեղ
մարդ կըձանձրանայ։ Դուք պարապ էք, դրա
համար էլ ձանձրանում էք։ Զէ կարելի հէնց

շարունակ երգեր երգել ու պարել։ Ահա Այծա-
մարդն էլ անգործ թափառում է անտառում և
պարապութիւնից մարդկանց վախեցնում, բայց
դուք այդ էլ չէք կարողանում անել։

— Պապիկ, ձանձրալի է, բայց դու դեռ
բարկանում էլ ես, գանգատուեց Զրամանուկը։

— Լաւ, էլ չեմ բարկանայ։





տեղեւ լուանում եմ, ամեն մի խոտիկը ցօղով
սրսկում, ամեն մի արմատիկը ջրում—այնքան
գործ կայ, որ չգիտես որն անել։ Իսկ ջրում
գիտես որբան կենդանի արարածներ են ապ-
րում, դրանց թիւու համար չկայ։

Ամեն ջրային մժեղ, որդներ, պղոճներ,
խխունջներ, խեցետիններ, գորտեր, ամեն տե-
սակի ձկներ, իսկ ջրի վրայ որբան թռչուններ
որ ապրում են, բոյն գնում, ձագեր հանում,
ինձ ծերունուս գովում են։ Ինձ մօտ ճահիճ-
ներում շրջում են երկայնակտուց ու երկարո-
տըն կացարները, լրամարգիներն ու ձկնները—
ները—միթէ քիչ ճահճային թռչուններ կան։
Դրանք էլ ամենքը ինձ ծերունուս գովաբանում
են։ Եթէ ցող չտամ, ճահիճները չորացնեմ, գե-
տերը աւազով ծածկեմ, էլ ապրելու տեղ չեն
ունենայ։

— Պապիկ, այդքան բան մենակ ինչպէս
ես կառավարում, զարմանքով հարցրեց լուա-
տըննիկը։

— Ահա ինչպէս... Ես օգնականներ ունիմ։
Իմ առաջին օգնականը—կարմիր արևն է։
Նա է, որ իմ մշուշը բարձրացնում է, տարա-
ցնում է ջուրը, ամեն խոտեղէն չորացնում ու
ամեն ծաղկի լոյս տալիս։ Իմ երկրորդ օգնա-
կանը—քամին է։ Նա է, որ արար աշխարհին
փռում է իմ ամպերը։ Կայ մի երրորդ օգնա-
կան ևս։ Ամառը գործը մենակ ես եմ տանում,

— Պապիկ դու ի՞նչ ես շինում, բարակ
ճայնով հարցրեց լուսատանիկը։

— Ի՞նչ եմ շինում։ Ա՛հ, դու յիմար, յիմար...
քիչ մնաց, որ Ջրապապը նորից չարանար։ Ես
ի՞նչ եմ շինում։ Ես ամեն բան անում եմ, յի-
մար։ Եթէ ես չինիմ, դուք ի՞նչպէս կապրէք։
Կուզենայիր ջուր խմել և չէիր ճարի։ Այս...
չէիր ճարի... Իսկ ես ցօղով քո ծարաւը յագե-
ցնում եմ։ Ա՛ռ, խմիր, յիմար։ Ի՞նչ կրլինէր,
Եթէ ես ամենքի հոգաը չքաշէի։ Երեկոյեան ես
ջրերից ու խոնար տեղերից մշուշը հաւաքում
եմ, գիշերը խտացնում, առաւօտը բարձրաց-
նում, ուղղակի արեի հանդէպ ուղարկում։ Եւ
ահա տեսնում ես, մի տեղ նա ցողի տեսքով է
թափթփւում, միւս տեղ անձրես և ամեն մի
խոտը, ամեն մի ծառիկը խմում է մինչև կըշ-
տանալը։ Իսկ յետոյ ով է նորից ջուրը մի տեղ
հաւաքում, առուակներ կազմում, գետերը թա-
փում ու տանում մինչև կապուտակ ծովը։ Այդ
ամենը ես եմ անում, յիմար... Ծառի ամեն մի

բայց ձմեռը ամեն տեղ չեմ կարողանում հասնել. Ահա այդտեղ ինձ օգնում է իմ եղբայրը—քիթ կարմրցնող Սառնամանիք—պապիկը։ Նա է, որ գետինը սառեցնում է ու վերկից փափուկ ձիւնով ծածկում, որ սառած գետնի մէջ ոչ մի սերմ, ոչ մի արմատիկ չփչանայ։ Նա է, որ մաքուր սառուցով ծածկում է ջուրը, որ կասես կամուրջ լինի երեսովը ձգած։ Եւ ձմեռը ամեն մի հատիկ, ամեն մի խոտիկ կասես օրօրոցում հանգատանում է և հէնց որ զարնան առաջին արկին զարթնում են, ես նրանց զարնանային տաք ջրով ոռոգում եմ։ Իմ գըլխաւոր աշխատութիւնը գարնանն է. ամեն տեղ առուակներ են վազում, կասես փոքրիկ երեխաներ լինին. անտառում ու մարզագետիններում ամեն տեղ ջուր է լցուած, կասես ապակիներ լինին փուած. գետինը խմում է ջուրը, կշտանում, ես աւելորդ ջուրը տանում գետերն եմ թափում ու այնտեղից կապոյտ ծովը ուղարկում։ Ո՞հ, որքան գործ կայ անելու, ել մարդ կարժղ է ձանձրանալ... Եթէ մի օր չաշխատեմ, ամենը կըփչանայ։

— Պապիկ, քո գործը դժուար է, ցաւակցաբար ասաց լուսատանիկը։

— Սովորել եմ, առանց գործի ձանձրալի է։ Զրապապը յանկարծ խոր մտքի մէջ ընկաւ, յետոյ իւր ճերմակ մօրումը սղալեց, յառաջեց ու ասաց.

— Աշխատելը ուրախութիւն է ինձ համար, յիմար, բայց ցաւն այս է... էհ, մի խօսքով ես թշնամի ունիմ։ Այս, այնպիսի թշնամի, այնպիսի թշնամի, որ էլ չեմ կարող ասել։

— Ա՛հ, ես գիտեմ ով է ըս թշնամին. վրայ բերեց յաւերժահարսը։ Մարդը, այնպէս չէ։ Դարձեալ պիտի գանգատուես ու չարանաս... Զանձրալի է։ Ես հարիւր անգամ եմ լսել դրամասին։

— Սիրելի Զրամանուկ, պապիկի խօսքը մի կտրիր, թող որ պատմէ, խնդրեց լուսատանիկը։ Ես կարծում էի թէ աշխարհի ամեն բաները գիտեմ, բայց դուրս է գալիս, որ միայն կէսը յայտնի է։ Պապիկ, քո գլխաւոր թշնամումասին պատմիր, խնդրում եմ։

— Ի՞նչ պատմեմ, յիմար։ Ո՞հ, այդ մարդը ինձ ի՞նչ չէ արել։ Որքան ջրեր առուներով լըճերից տարել է, քանի քանի ճահիճներ չորացրել, քանի գետեր փչացրել և որ ամենամեծ չարիքն է—կտրում փչացնում է անտառները։ Նա անտառը կտրում է և ես տեղ չունիմ ջրի պաշար պահելու։ Այն տեղերը, ուր մի ժամանակ գետնից քչքչան աղբիւրներ էին վազում, այն տեղերը ուր խոտը կանաչին էր տալիս, ուր անտառի ծաղիկները, թփերն ու ծառերը զարդարում էին—այժմ միայն չոր հողն է մնացել։ Ո՞հ, նա իմ գլխին մեծ փորձանք է... ես դեռ չեմ հաշւում այն ամեն վնասները, որ նա

ինձ տալիս է. — ձկները որսում է, ձախնային
ու ջրային թռչունները կոտորում, խոտը հըն-
ձում և դեռ այդ ամենը նրան քիչ է: Ես
նրանից թագյունում եմ ջուրը գետնի խոր-
քերում, նա ջրհորեր է փորում՝ իմ ջուրը
գողանում... իսկ որտեղ ջուր չկայ, այնտեղ
կեանք չկայ:

— Պապիկ, մարդու մասին ես քեզ մի բան
պատմեմ, ասաց լուսատառնիկը: Մինչև անգամ
ծիծաղելի է:

— Էհ, պատմիր, պատմիր, ինդրեց յաւեր-
ժահարսը, ուրախ բան է, չէ:

— Այն, ուրախ:

— Դէ, լսենք յիմար ճիճուխն, համաձայն-
ւեց Ջրապապը, իր մօրուսը սղալելով: Միայն
տես ճշմարիտն ասա, դատարկ բաներ դուրս
չտա:



Ճիճուն առաջ հաղաց, յետոյ սկսեց իր
պատմութիւնը:

— Մարդկանց հետ ես շատ ժամանակ
չէ որ ծանօթացել եմ, բայց այնպէս մօ-
տիկ, որ առանց սիսլուելու կարող եմ նրանց
մասին դատել:

— Բանն այսպէս էր: Յիշում էր, թէ ինչ-
պէս որսորդները այստեղ եկան:

— Ո՞հ, ինչպէս չէ, ափ բաշեց Ջրապապը:
Նրանց գնալուց՝ ես բաւականին հոգա ու-
նեցայ:

— Իսկ ես աւելի ունեի, պապիկ: Նրանք
ամբողջ օրը որսի էին և գիշերը մեզ մօտ ան-
տառում անցրին: Նրանց հետ Գէորգ անունով
մի երեխայ կար, որ որսորդներից մէկի որդին
էր: Այս Գէորգը հաղիւ թէ սովորել էր հրացան
արձակել, բայց այնուամենայնիւ մի բադ էր

սպանել: Երբ շունը սպանուած թռչունը տուեց Գէորգին, նա խղճահարուեց: Բաղը այնպէս սիրուն էր և Գէորգը շատ ցաւեց նրա վրայ: Ինչու նրան սպանեց: Նա ուրախ լողում էր իւր համար, կարելի է նա եղբայրներ ու քոյրեր ունէր: Առհասարակ լաւ բան չէր այդ, բայց և այնպէս Գէորգը բարի տղայ էր:

Ես զարմացայ, որ նա ծածկում էր իւր խըդահարուիլը միւս որսորդներից և իրան ձեացնում էր թէ ինքը շատ ուրախ է: Ինքն իրան Գէորգը այսպէս էր մտածում, թէ աւելի զուարձալի է քարեր ու խեցեմորթներ հաւաքել, ծաղկներ քաղել ու թիթեռներ բռնել, բայց միւս կողմից ուզում էր մեծ երևալ և մեծերի պէս աշխատում էր խօսել: Երեկոյեան որսորդները մեծ կրակ վառեցին և երկար ժամանակ ընթրիքի էին նստած և ընթրիքի ժամանակ մէկ մէկու զարմանալի բաներ էին պատմում: Դուրս էր գալիս որ կարծես ամեն մէկը ուզում էր միւսներից խելօք երևալ: Ես խոտերի մէջ պառկել էի, բոլորովին մօտ և լսում էի ինչպէս են նրանք պարծենում և խոստովանք լինի, շատ ստեր էին խօսում: Ես մինչև անգամ նրանց տեղ ամաչում էի, այնպէս ամաչում, որ ամօթից իմ կրակը կանաչ գոյն առաւ: Գէորգը իսկոյն նկատեց ինձ, բռնեց և ուրախութիւնից կանչեց.

— Ահ, ինչպէս սիրուն Գիշերավառ-ճիճուէ:

Ես առաջին անգամ լսեցի իմ անունը և խոստովանուում եմ ինձ շատ հաճելի էր, որ ինձ ճանաչեցին ինչպէս մի հին ծանօթի: Ինքս բոլորովին փոքրիկ ճիճու և ամենքը ճանաչում են: Ի հարկէ ով էլ լինէր, գոյն կմնար:

— Հայրիկ, այս ճիճուին ես թաշկինակումս կըդնեմ. նա այնպէս փառահեղ է, թանկագին քարի պէս լոյս է տալիս, ասաց Գէորգը ճեռի ափում ինձ տնտղելով:

— Ոչ, թաշկինակում դու նրան կըջարդես, պատասխանեց հայրը: Ծխախոտի մի տուփ վերցրու ու մէջը դիր:

— Հայրիկ, ես էլի լուսատափիներ կըհաւաքեմ... Շատ-շատ լուսատափիներ:

— Ճշմարիտն ասած՝ տուփի մէջ ընկնելը ինձ դուր չեկաւ, մանաւանդ երբ Գէորգը մի քսան լուսատափիներ էլ ժողովեց այնտեղ, խփանով ծածկեց ու քողով կապեց: Սարսափելի նեղուածք էր և յետոյ—օդը վատ: Մենք ամենքս փոշում ու հազում էինք, մինչև որ վարժուեցինք: Լուսատափիներից մի քանիսը վախից ու վշտից բոլորովին դադարեցին լոյս տալուց, միւսները տրտնջում ու բարկանում էին, իսկ մնացածները ամրող գիշերը տուփի մէջ սողում էին ի զուր մի անցք որոնելով: Ո՞հ, ինչպիսի սարսափելի գիշեր էր... իմ մասին միայն այս կասեմ, որ ես բաշուել էի մի անկիւն և ամբողջ գիշերը դառնացած՝ լուս էի,

Նախազգալով որ դեռ աւելի վատթար բան կարող է առաջա գալ, թէև ստուարաթղթի (կարտոնի) տփից աւելի վատթար բան դժուար թէ գտնուի:

— Այնուամենայնիւ հետաքրքրականէ պատմութիւնը, նախանձեց յաւերժահարսը։ Յետոյ ի՞նչ եղաւ։

— Այս, որ ես ուղղակի քաղաք գնացի. շարունակեց լուսատանիկը հպարտութեամբ. Այս, քաղաք:

— Ահ, ինչ բաղդաւոր ես, կրկին նախաճ-
ձեց նրան յաւերժահարսր։ Քաղաքոթնէն ռան է։

— Քաղաքը... քաղաքը, — այդ... այդ, Է՞ս մի
խօսքով — շարքով դասաւորուած ահապին տակ —

փեր են, իսկ նրանց մէջ մարդիկ են ապրում։
Առհասարակ մի լաւ բան չկայ։ Մինչև անգամ
ես ցաւեցի այդ անբաղդ մարդկանց վրայ, ո-

ըստ պէտք է ամբողջ կեանքը այդպիսի տռւ-
փերի մէջ անշկացնեն: Ես կարծում եմ հէնց
դրանից է, որ նրանք այնպէս չար են: Ես այդ
բանը փորձել եմ ինձ վրայ: Քաղաք հասնելով՝
Գէորգը մեր առւփը բերեց, բաց արաւ ու ա-
սաց:

— Ահ, ցերեկով ինչպիսի տգեղ միճուներ են:

Մենք ի հարկէ վշտացանք: Ինչպէս կը լինի,
որ հիւր տանեն ու ծիծաղին վրադ: Միքանի
լուսատաթիկներ արգէն մեռած ընկած էին և

Գէորգը, առանց ողևէ ցաւակցութիւն յայտնելու, դէն շպրտեց:

— Իսկ այս մէկը կենդանի է... գովեց նա,
երկու մատով զգուշութեամբ ինձ վերցնելով...
բոլորովին ընտիր ճիճու։ Ապրես... Հէնց այժմ
իսկ ամենաբարակ գնդասեղի վրայ կանցկա-
ցնենք։

Սկզբում ես չհասկացայ այդ ինչ է նշանակում և մինչև անգամ միւս լուսատափկների առաջ մի քիչ էլ պարծեցայ: Բայց երբ Գէորգը ինձ տարաւ մօտեցրեց ապակէ ծածկով մի գեղեցիկ փայտէ արկղի, որի մէջ շարքերով գլուզասեղների վրայ ցցած էին ամեն տեսակ միջատներ, ես քար կտրեցի: Դրանից սարսափելի բան չէի կարող ինձ երևակայել...

Միքանի պղոճներ դեռ կենդանի էին և
մէջերից գնդասեղ անցրած՝ ոտները թոյլ շար-
ժում էին։ Երկիւղից, որ ինձ էլ գնդասեղի պի-
տի անցնեն, ես ուշաթափ վայր ընկալ։

Յետոյ ինչ-որ տար բանից ես ուշըի եկայ:
Երևաց, որ ես բամբակով մի տուփի մէջ պառ-
կած եմ, իսկ փոքրիկ կատարինէն ինձ տա-
բացնում է իւր շնչով:

—Ա՞հ, կենդանի է, բացագանչեց նա
ուրախ, երբ ես շարժուեցի: Խեղճ, սիրելի ճի-
ճու... Գէորգ, ինչ էլ որ լինի, այլևս քեզ չեմ
տայ սրան: Թող նա իմ ապակէ ամանում



լոյս տայ... Ես նրա համար խոտ կըքաղեմ, կաթ
կըտամ, մանր շաքար կուտացնեմ:

Եւ ահա ես նստում եմ ապակէ ամա-
նում:

Յարմար բնակարան է, բայց ինչ համե-
մատութիւն մեր անտառի հետ: Կատարինէն
ամեն երեկոյ անհամբեր սպասում էր, թէ երբ ես
պէտք է լոյս տամ: Նա հրաւիրում էր իւր ըն-
կերուհիներին ինձ վրայ նայելու և ես կրկին
սկսեցի հպարտանալ: Ասել է, ես այնքան էլ
տգեղ չեմ, որ ինձանով ամենքը զուարճանում
են: Այսպէս մի շաբաթ անցաւ և յետոյ ես
նկատեցի, որ Կատարինէն այլևս ինձ վրայ
ուշադրութիւն չէ դարձնում: Ես բարկացայ և
դադարեցի լոյս տալ: Երբ Կատարինէի հայրը
կրկին պատրաստում էր որսի գնալու, աղջիկը
ինձ բամբակի տուփի մէջ տեղաւորեց, կարմիր
ժապաւէնով տուփը կապեց ու ասաց. «Հայ-
րիկ, այս ճիճուն տար իւր տուն... Ես վախե-
նում եմ, որ նա մեզ մօտ մեռնի»:

Հայրը ինձ գրպանը կոխեց և մենք գնա-
ցինք: Հասկանալի է, որ ես սաստիկ ուրախա-
ցայ: Բայց այդ ցնորամիտ պարոնը բոլորովին
մոռացել էր ինձ և երբ բռնեց իմ տուփը ու
հանեց լուցկու տուփի փոխարէն, մինչև անգամ
չարացաւ և իմ տուփը խոտերի մէջ շպրտե-
լով բարկացած ասաց. «Ահ, այս Կատարինէն...
ինչ անպէտք բան ասես, զրպանս է կոխում»:

Այս ի՞նչպէս է ձեզ դիւր գալիս. «անպէտք»,
այս նշանակում է, ես եմ, այն լուսատափիկը,
որով ամենքը քիչ առաջ զուարճանում էին և
գովարանում: Ահա քեզ արդարութիւն...



գիտեն, ամեն բան հասկանում են։ Սակայն նրանք միմիայն նրանով են զբաղուած, որ միմեանց հաւատացնում են իրանց գիտնական լինելը և մէկ մէկու վրայ զարմանում։ Մինչդեռ նրանք գրեթէ ոչինչ չգիտեն, կամ թէ մի կէսն են իմանում։ Ես անձամբ համոզուել եմ... Իմ կարծիքով՝ այդ առաջ է զալիս նրանից, որ մարդիկ իրանց կեանքի մի երրորդ մասը ընում են և զրա համար էլ հէնց կարծում, որ կեանքը միայն ցերեկն է լինում։ Դէ, դուք ասացէք, այս ծիծաղելի չէ։

— Այս, ծիծաղելի է... համաձայնեց Զրապապը։

— Չէ որ կեանքը մեզ մօտ անտառում գըլխաւորապէս զիշելն է։

— Այս, այգպէս է... ինչպէս տեսնում եմ, դու այնքան էլ յիմար չես...

— Դէ, ես էլ ցանկանում եմ Զրամանուկին պատմել իմ տեսածը։

— Լաւ, լաւ, պատմիր, իսկ մենք կըլսենք։



այց դու ի՞նչպէս դուրս եկար տուփից, երբ նա կապուած էր, հարցրեց յաւերժահարսը։

— Ինձ Զրապապը բաց թողեց։ Գիշերը շաղ դրաւ, տուփը փափկեց և ես արանքից դուրս

եկայ։

— Հէնց բոլորն այդ է, ինչ որ պատմեցիր, հարցրեց Զրապապը։ Հետաքրքրական շատ քիչ բան կայ։

— Ամենից հետաքրքրականը գեռ չեմ պատմել, պապիկ։ Ճանապարհորդութիւնը ամենալաւ կրթութիւնն է և ես շատ բան հասկացայ, ինչ որ առաջ չգիտէի։ Օրինակի համար՝ ինձ սաստիկ յուզում էր մարդկանց պարծենկոտութիւնը. նրանք ամեն բան իբր թէ

մասն. ում համայնքում մայ մանա ըմբռի
մեր գո ծառապոր ու խոնաց մշատիսի զանդ
մասնակի տուալ ու համայնքում ըմբռի
մասն.

ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐ



ըր ես լոյս աշխարհ դուրս
եկայ, մեծ ուրախութիւն
էր ինձ համար, պատմեց
լուսատափիկը: Գուցէ այդ
թեթևամտութիւն էր, բայց
այդ այդպէս էր... Այն, զի-
շեր էր, ամառուայ հրա-
շալի գիշեր: Ցիշում եմ ինչպէս աստղերը, պայ-
ծառ փալփլում էին և ես նրանց երկնքում
ապրող լուսատափիկներ կարծեցի: Իսկ և իսկ
լուսատափիկներ... Իրանք էլ իսկական լուսա-
տափիկների պէս դանդաղ սողում են: Այ-
ժըմ օտարոտի է թւում ինձ մինչև անգամ
դրա մասին յեշել, այն է՝ իմ մանկութեան օ-
րերը, երբ ես այնպէս պստիկ էի ու բո-
լորովին յիմար: Բայց այդ այնպէս վաղ էր,
այնպէս վաղ, որ կասես ամբողջ դարեր են
անցել: Ծերութիւնը ուրախ բան չէ, և ես այդ

սկսում եմ զգալ, երբ մտածում եմ անցեալի
վրայ: Այն, հեշտ չէ ամբողջ երեք շաբաթ ապ-
րելը: Ինչեր չքաշեցի, ինչ հոգսեր ինձ շտան-
ջեցին, և որքան դառն փորձեր, անախորժու-
թիւններ ու հիասթափութիւն ինձ բաժին ըն-
կաւ: Ես մինչև անգամ երեմն մտածում եմ,
որ իսկապէս բոլորովին չարժէ ապրել, որովհե-
տեւ հազիւ թէ խելօք լուսատափիկ ես դառնում,
մահը վրայ է համնում: Այդ անարդարութիւն է...

Լուսատափիկը ծանր հոգոց հանեց, բայց
Զրամանուկը նրան ասաց. «Երբէք չպէտք է յու-
սհատուել: Պատմիր ամենը կարգով»:

—Ներիր, Զրամանուկ, ասաց լուսատափիկը.
Ես սկսում եմ ծերունու պէս շատախօսել: Ինչ
արած, երբ այսպէս երկար ապրում ես աշ-
խարհում և այսքան տանջւում...

—Խնդրում եմ աւելորդ մի խօսիր, լուսա-
տափիկ: Դու բո պատմութիւնը ընդհատեցիր
այստեղ, թէ ինչպէս լոյս աշխարհ ընկար... յի-
շեցրեց Զրամանուկը: Այդ գիշեր ժամանակն
էր...

—Այն, այն... բոլորովին ճիշտ է, հէնց գիշեր
էր: Առաջին բանը, որ ծագեց գլխիս մէջ—այդ
այն էր, որ ես բոլորովին միայնակ էի աշխարհում:
Անկեղծ ասեմ, ես մի քիչ էլ վախեցայ: Հարկաւ,
ինչպէս կարելի է միայնակ ապրել, երբ շուր-
ջը ոչ մի կենդանի արարած չկայ: Ցետոյ ես
խմել էի ուզում և բարձր ձայնով ասացի. «Ահ,

լաւ կը լինէր, որ մի բան խմէի... Եւ յանկարծ լսում եմ, մէկը այնտեղից պատասխանում է ինձ. «Ահ, ինչ յիմար ճիճու է. Սոդա դէպի աջ և քեզ կանաչ խոտը կը խմացնէ»: Ես նայում եմ, թէ ով է այդ խօսողը և տեսնում եմ իմ գըլ խավերել կանգնած է մի ահագին սունկ, իսկ նրա վրայ նստած է խխունջը և իւր պողերը հանաձ ինձ է նայում:

— Բարնվ, ճիճու եղբայր, կը կին խօսեց խխունջը:

— Բարով...

Իհարկէ մենք իսկոյն ծանօթացանք, զրոյց արինք և մի անգամից մօտիկ բարեկամներ դարձանք: Ես առաջին անգամ փորձեցի, թէ ինչ է բարեկամութիւնը և հասկանալի է հիացայ միանգամայն: Բարեկամ ունենալուց լաւ բան ինչ կարող է լինել:

— Ո՞հ, ես շատ բարեկամներ ունիմ, պատմեց խխունջը: Հեռու ուր գնանք—ահա Սունկը, որի վրայ նստած եմ... Մենք այնպիսի բարեկամներ ենք, որ մի ըոսէ էլ չենք կարող իրարից հեռանալ:

Այս խօսքի վրայ յանկարծ տեսայ, թէ ինչպէս Սունկը կնճռեց դէմքն ու փնթփնթաց: — Էլ ինչ ցաւ, լաւ բարեկամ է... զիշել ու ցերեկ ինձ կը ծում է:

— Կոիր, բաֆթառ... չես ամաչում:

Երեակայեցէք իմ գրութիւնը, երբ ամեն կողմից զանազան ձայներ լսուեցին:

— Ի՞նչ ես դրան ականջ դնում, ճիճու, նա այնպէս անկուշտ է... Նրա բան ու գործը նստել և ուտելն է:

Գանգատուեց կանաչ խոտիկը, գանգատուեցին փոքրիկ սունկերը, գանգատուեցին հաղարձի քնքոյշ տերեկները: Խոստովանում եմ՝ այդ ամենը ինձ սաստիկ ծանր էր լսել: Իմ միակ բարեկամը և այդպիսի տարօրինակ բարք: Ինձ աւելի ևս տրտմեցրեց այն, որ խխունջը առանց քաշուելու ընդհանուր անբաւականութիւնից, բոլորովին հանգիստ ասաց.

— Դէ, այդ մեր ընտանեկան գործերն են, ճիճուիկ: Դու նրանց ականջ մի դնիր... ինքդ կը տեսնես, թէ դրանք ինչ անարդ ժողովուրդ են:

Ես արդէն ասացի, որ կանաչ խոտիկը ինձ խմելու հրաւիրեց: Ես սողացի դէպի նրան: Ինքն այնպէս փոքրիկ կանաչ խոտ է, բայց վրան ցողի կաթիլները կասես մարգարիտ լինեն շարած: Իհարկէ ես ցողը խմեցի, բայց յետոյ յանկարծ ուտել ուզեցի ու հափ, կծեցի խոտը... Այդ ամենը ինքնաբերաբար եղաւ.—ասենք խոտն էլ այնպէս համեղ էր:



Բ

շմարիտն ասած՝ երբ ես առաջին խոտը կերայ, մի քիչ խղճահարուեցի: Ինձ այնպէս թուաց թէ ամենքը վրաս են նայում, իսկ հաղարձի կանաչ տերևիները իրար մէջ մի բան են փսփսում և մինչև անգամ անբաւականութիւնից զլիները շարժում: Բայց ես այնպէս ձևացայ, որ իբր թէ ոչինչ չեմ նկատում և կամաց խոտերի մէջ քաշուեցի, որ ինձ չտեսնեն: Միթէ ես մեղաւոր եմ, որ այսպէս համեղ, կանաչ խոտ է բանում: Յետոյ մի անգուստ հետաքրքրութիւն ինձ առաջ մղեց. ես ցանկացայ ամեն բան գիտենալ, ինչ որ կայ և կատարւում է աշխարհում: Եւ ինչքան աւելի հեռու էի սողում, այնքան աւելի հետաքրքրական բաներ էի գտնում: Ախ, ներեցէք, ես դեռ չվերջացրի իմ խխունջ բարեկամի պատմութիւնը: Խեղճը լաւ վախճան չունեցաւ. առաւտեան տեսել էին՝ մի ինչ-որ թոշուն բռնել

էր նրան ու կերել: Ես ցաւեցի նրա վրայ և կարծում եմ, որ նա այնպէս էլ յանցաւոր չէր: Յետոյ ես տեղեկացայ, որ միայն խխունջներն ու ճիճուները չեն ուտում բոյսեր, այլ իրանք բոյսերն էլ միմեանց ուտում են, ինչպէս զանազան մամուռներն ու քարաքոսները: Բոյսերին մեծ վսաս են տալիս մանաւանդ սունկերը, զրանք ուղղակի սպրդում են ծառի կեղևանքի մէջ ու ծառի քաղցր հիւթը ծծում: Մի խօսքով ուտելու կողմից ոչ մի տեղ արդարութիւն չէր գտնի...

Այսպէս ես սողացի առաջ ու առաջ և ամեն քայլափոխում որևէ նոր բանի հանդիպեցի: Երեաց որ շուրջս կեանքը եռում է: Ես ծանօթացայ երկու ճիճուների հետ, որոնց Աստուծոյ կովիկներ են անուանում. յետոյ ուղեցի մի զեղեցիկ գիշերային թիթեռի հետ ծանօթանալ, բայց նա թռաւ. յետոյ տեսայ փոքրիկ կանաչ բգեզներ, բաց-կապոյտ խոտանձիներ, սարդեր. քիչ էր մնացել որ մըջնանոցն էլ ընկնէի: Այն, այդ բոլորովին անզուրեկան ծանօթութիւն կրլինէր և ես ազատուեցի շնորհիւ մի բարի հողային ճիճուի, որ վըտանգի մասին ինձ նախազգուշացրեց:

— Երեի դու նոր ես ճնուել. կանգնեցրեց ինձ հողաձիճուն:

— Այն, այս գիշեր...

— Զգոյշ կաց—ահա տեսնում ես այս փոք-

Ի՞կ կածանը, նա տանում է դէպի մրջնա-
նոցը, որ գտնւում է հիւրանոցի եղենու տակ.
Երէկ տեսայ, թէ ինչպէս մրջիւնները այդ ճա-
նապարհով քաշելով տարան քեզ նման մի լու-
սատտիկ:

— Ինչու համար տարան:

— Զարմանալի հարցմունք... Շատ հասկա-
նալի է. տարան մրջնանոց, որ ուտեն: Նրանք
ամեն բան կրում են իրանց բոյնը:

— Ահ, ինչպէս չար են նրանք.

— Ինչպէս քեզ ասեմ... ոչ թէ չար են, այլ
սիրում են ուտել. Պարզն ասած՝ վատ սովո-
րութիւն է ուտելը...

Ես այդ հանդիպմանը սաստիկ ուրախ էի.
Ինչ էլ որ չէ, ճիճու է, քո եղբայրակիցը, կա-
րելի է հետը խօսել, խորհրդակցել: Նա շատ
գեղեցիկ էր—այնպէս կարմիր, կասես վէռնի-
ճով ծածկած լինէր: Միայն նա բոլորովին ոտ-
ներ չունէր:

— Իմ ինչ պէտքս է ուները, բացատրեց
նա: Չէ որ մենք ապրում ենք հողի մէջ և
ուները մեզ կըխանգարէին միայն:

— Այնտեղ մութ է, չէ...

— Ոչինչ, վատ չէ: Գլխաւոր բանը այս է,
որ գու ոչ մէկին մի վնաս չես տալիս,
այլ ընդհակառակը բոլոր բոյսերին օգուտ ես
բերում: Չէ որ մենք, հոգածիճուներս ենք,
որ փափկացնում ենք հողը, որպէս զի ամենա-

նուրբ մազի պէս բարակ արմատիկները կա-
րողանան իրանց համար կերակուր գտնել: Ո՛հ
մեզանում միշտ աշխատութիւն կայ: Ես բոլո-
րովին չեմ ուզում պարծենալ, բայց մեզանից
ազնիւ դժուար թէ մէկը գտնուի: Վերցրու
միւս ճիճուները. ամենքը բոյսերով են կերակ-
րում և յաճախ ամբողջ ծառեր, մինչև ան-
գամ ամբողջ անտառներ են փչացնում:

— Անկարելի է... զարմացայ ես:

— Հտւատացնում եմ քեզ: Ահա ինքդ էլ կը-
տեսնես... Այ տես, այնտեղ մի մեծ եղենի
է երևում. նա շուտով կըկործանուի, կընկնի...
խօսքով դժուար է բացատրել, սողանք այնտեղ
և ես ամենը քեզ ցոյց կըտամ:

Մենք սողացինք երկար, մինչև եղենուն
հասանք: Մի տեղ իմ նոր բարեկամը կանգ ա-
ռաւ ու ականջիս ասաց.

— Խնդրեմ մի քիչ զգոյշ... Ահա այնտեղ մի
գորտ կայ նստած: Նա մեր ընդհանուր թշնա-
մին է: Ես առաջին անգամ տեսայ այդ զգուե-
լի կենդանուն. դրանից վատ որևէ բան դըժ-
ուար կարող ես երևակայել: Իմ կարծիքով
գորտերից ամենափոքրիկը հազար անգամ գայ-
լից ու արջից էլ վատ է, հաւատացնում եմ
ձեզ: Չէ որ ոչոք չի ասի, որ գայլը կամ արջը
որևէ ժամանակ, թէկուզ մի ճիճու կերաւ:
Ես ահիցս քիչ էր մնացել ուշաթափուէի,
մանաւանդ երբ գորտը սկսեց կոկուալ:

— Դէ այժմ կարող ենք խաղաղ առաջ սովորած ճայնով ասաց հողածիճուն. եթէ գորտը կոկում է, ասել է, նա կուշտ է: Երևակայում եմ թէ նա այսօր քանի ճիճուներ, խըսունչներ, ճանձեր ու զանազան միջատներ է կուլ տուել...

Այս այս երկրորդ վասնգն էր իմ կեանքում, բայց ես գեռ չգիտէի, որ ամեն բայլափոխում վասնգ է սպառնում: Կարծում էր հեշտ բան է ճիճուի համար մի ամբողջ զիշեր լուսացնել—սխալում էր: Մեծ ինելք է հարկաւոր, որ կարողանայ ողջ մնալ:



q.

Մ ենք յաջողութեամբ մինչև եղենին սողացինք:
— Եղեանիկ, ի՞նչպէս է առողջութիւնդ, հարցը ճիճուն:

— Շատ վատ... պատասխանեց Եղենին ինձ կոյսը կերաւ: Սովամահ պէտք է մեռնեմ...
Երևաց, որ կոյս անունը տալիս են հէնց այն գեղեցիկ ճերմակ թևերով թիթեռին, որի հետ քիչ առաջ ուղղում էի ծանօթանալ և որը թըռել էր, ինձանից փախել: Ես միանգամայն չկարողացայ հասկանալ թէ ինչպէս այդպիսի փոքրիկ, գեղազարդ արարածը կարող է այդպիսի ահազին ծառը ուտել: Բայց յետոյ ամեն ինչ պարզուեց:

— Այ, տեսէք թէ որքան կոյսեր են նստած կեղեի վրայ, ցոյց տուեց ճիճուն: Այդ թիթեռներից ամեն մինը կեղեի տակ հազարաւոր փոքրիկ, ճերմակ ձուաներ է դնում, որոնցից յետոյ փոքրիկ ճերմակ որդեր են դուրս գալիս: Ահա այդ որդերը կեղեր կրծում են և հաս-

նում մինչև փափուկ ու հիւթալի շերտը, որի միջոցով ծառի սննդարար հիւթն է բարձրանում, այդտեղ էլ որդերը ապրում են. Նրանք շատ ագահ են և լափում են ամբողջ ծառը, մինչև նա չորանում է: Ահա նայիր մեր եղևնին արդէն սկսել է կարմրել և նրանից թափթփում են չոր ու մեռած առղնածե տերեները:

— Այդ չէ՞ որ սարսափելի է, յուզուեցի ես: Ասենք թէ այսօր ես մի խոտ եմ կերել, բայց խոտը—չէ՞ որ ծառ չէ:

— Այդ բոլորովին միևնոյն է: Չէ՞ որ խոտն էլ է ուզում ապրել...

— Խոտը կարող է մի զիշերուայ մէջ բարձրանար, իսկ այդպիսի ահագին ծառը երկի շատ երկար ժամանակի ընթացքում պէտք է աճի:

— Այն միքանի տարիներ:

— Հնաց բանն էլ դրանումն է...

Խոտովանում եմ, որ մենք սաստիկ վէճ ունեցանք. ինձ թւում էր թէ հողաճիճուն կարող էր աւելի բաղաքավարի լինել, բայց չէ որ հենց բոնել էր իմ պոչից, թէ ես խոտը կերել եմ և ուրիշ զանազան լրբութիւններ խօսել: Բանն այստեղ հասաւ, որ նա ինձ առաջարկեց հողով կերակրուել:

— Բայց եթէ ես չեմ կարողանում հող ուտել, հաւատացրի նրան:


— Ոչինչ... դու միայն համը տես: Պա-

րարտ ու խոնաւ հողից քաղցր ինչ կարող է լինել: Ես փորձեցի, բայց թրելով թափեցի իսկոյն: Այս բանը վիրաւորեց հողաճիճուխն և նա սկսեց ինձ հաւատացնել, որ ես կեղծում եմ:

Այդ բանի վրայ ես վշտացայ: Մենք հաւատական է որ վերջը կըկուռէինք, բայց արդէն արևը բարձրանում էր և մենք երկուս էլ սաստիկ յոգնութիւն էինք զգում:

— Դէ, ցտեսութիւն, ասաց իմ ճիճուն ու սկսեց հողի տակ ծածկուել, վաղը երեկոյեան կըտեսնուենք:

Ես ինձ համար խեղճ եղևնու արմատների տակ մի համեստ անկիւն ճարեցի և իսկոյն քնեցի:



ագահութեան կասես չափ ու սահման չկար,
իսկ խեղճ միջատները օդի մէջ շարունակ ու-
րախ պտտում էին, որովհետև չէին հասկանում,
թէ արևի լոյսն էլ խարուսիկ է, ինչպէս և գե-
ղեցիկ գոյնզգոյն ծաղիկները: Ո՞հ, այդ բա-
նը ես իսկոյն հասկացայ ու փառք տուի
Աստծուն, որ ինձ թեսեր չէր տուել և իմ աշքե-
րը չէին տանում արևի ճառագայթները: Միթէ
արժէ աշխարհ գալ միմիայն նրա համար, որ մի
որևէ ագահ թռչունի քարճիկն ընկնես: Յետոյ
ես համոզուեցի, որ ամենքը մեզ ճիճուներիս
նախանձում են, բայց ինչ կարելի է անել. ա-
մենքը խօս չեն կարող ճիճու լինել: Ով ինչպէս
ծնուել է, այնպէս էլ պիտի ապրի:

Այսպէս ես ամբողջ օրը քնած էի և գու-
ցէ ողջ գիշերն էլ կըքնէի, եթէ մէկը կողքիս
ցաւելու չափ մի պինդ չխփէր ու կոպիտ ճայ-
նով չասէր.

— Է՞յ, դու, մրափան, ճանապարհցս հե-
ռացիր:


Համաձայնեցէք, որ դուք եթէ քնած լինէք
և գան ձեր կողքին խփեն ու ձեր ականջին ա-
մենակոպիտ խօսքերով գոռան—կըքարկանաք
թէ ո՞չ: Ես էլ ուզում էի բարկանալ, բայց մէկ
էլ տեսար՝ մէջքիս վրայ ընկայ:

— Է՞յ, դու, ով ես... կանչեցի, ոտներս օդի
մէջ թափահարելով:

— Քեզ հետ խօսելու գլուխ չունիմ... Կոպ-

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Ա



Թէ մի քիչ ամաչում եմ խոստովա-
նուել, բայց իմ կեանքի առաջին օրը ես
բաւական անհանգիստ քնեցի: Թէ շոգ էր
և թէ արևի լոյսը չափազանց շատ: Ես ե-
ղենու արմատի տակ մի մութ անկիւն էի քա-
շուել, ուր փառաւոր անկողին էր ձգուած փա-
փուկ ու կանաչ մամուռից: Ճշմարիտ է ես մի
երկու անգամ զարթնեցի, սողացի գուրս նայելու
թէ ինչ է կատարւում և կրկին իմ տեղը մտայ:
Այսուամենայնիւ ես սարսափելի բան տեսայ.
Խոտերի մէջ շատ զեղեցիկ ծաղիկներ էին ըը-
սել, իսկ նրանց վրայից հազարաւոր տեսակ-տե-
սակ մժեղներ, միջատներ ու թիթեռներ էին
պտտում և յանկարծ որտեղից էր մի թռչուն
թռաւ և այդ գժբաղտներին այնպիսի արա-
գութեամբ բռնոտում էր, որ խեղճերը դեռ
չսատկած՝ յաւիտեանս թռչունի քարճիկում
անհետանում էին: Այդ զարհուրելի թռչունի

տաբար պատասխանեց ինձ մի մեծ, ու պղոճ երկու ահռելի ու պոգերով։ Ամենից զարմանալին այն էր, որ նրա աչքերը այնպէս ու էին, ոսկրային ու բոլորովին անշարժ։

Մեր խօսակցութիւնը դրանով էլ վերջացաւ։ Պղոճը ծանր առաջ գնաց ու երկար ընշացքը շարժելով։ «Սրան նայեցէք, ինչ սիրունատես կենդանի է»։ ինքս ինձ մտածեցի առանց ձայնս բարձրացնելու։ Վերջերում ես համոզուեցի, որ ժամանակին լուսաթիւն պահպանելը ամենամեծ իմաստութիւն է։ Եթէ ես պղոճի հետ սկսէի վիճել, կամ նրա պէտ կոպիտ պատասխան տայի, ինչ մի դժուար բան էր նրա համար, որ ինձ իւր պոգերի մէջ բաշէր։ Այս, աշխարհում ապրելով՝ ամեն բանի սովորում ես, մանաւանդ լոելու իմաստութեան, երբ թևեր չունիս փորձանքից հեռութոչելու։ Ինձ կարող են վախկոտ անուանել, բայց ուրիշ ինչ կարող էի անել, եթէ չէի ցանկանում ինձ պողերին անցկացրած ահսնել։ Այո՛, միայն ես չեմ այդպէս։ Ուրիշները ինձանից աւելի վատթար են, հաւատացնում եմ ձեզ։

Ահա օրինակ։ Հենց սրտոտ պղոճին ճանապարհ զբի թէ չէ ու իմ բնից գուրս եկայ, յանկարծ ինչ տեսնեմ... Ես միանգամից թուլացայ։ Ուղակի իմ վրայ էր վազում մի սարսափելի զազան, ահռելի ականջներով ու սարսափելի աչքերով։ Նա եղենու շուրջը վազվեց ու պազեց

արմատների մէջ մի փոսում, ես այժմ միայն գլխի ընկայ, որ նա ինձ վրայ չէր վազում, այլ վախչում էր մի ահագին թռչունից, որ նրա ետերից էր ընկել։ Նա կորցրեց զազանին և իւր լայն թևերի մեղմ թռթոցով ստուերի պէս ծածկուեցաւ անտառում։ Այդ ահռելի զազանին նրա նման մի ուրիշ ահռելի զազան մօտեցաւ, թաթերի վրայ նստեց, ականջները ցցեց ու ասաց։

— Ի՞նչ է, վախեցար, Շլաչիկ...

— Ո՞հ, քիչ էր մնում բազէի մագիների մէջ էի ընկնում, հառաջեց առաջինը։ Շունչս կտրրւում է...

Այդ երկու նապաստակներ էին։ Ահա խեղճ գազաններ, որ իրանց ամբողջ կեանքը վախով են անցկացնում։ Յերեկը նրանք թագ են կենում, միայն երեկոյներն են իրնաց որջից դուրս գալիս, որ կերակուր ուտեն ու թռչկոտան։ Ես նրանց վրայ ցաւեցի։ Իրանք այնպէս խոշոր են ու այդպէս վախկոտ, իսկ ինձ իմ վախկոտութեան համար չէ կարելի մեղագրել, ես թէ փորբ եմ և թէ անպաշտպան։ Նապաստակը այնուամենայնիւ կարող է վախչել, իսկ ես միայն նրանով եմ ազատւում, որ ինձ մեռած եմ ձևացնում։





**Ե**րբ նապաստակները մի փոքր
խաղաղուեցին, իսկոյն սկսեցին
խոտ կրծել: Նրանց նայելով յի-
շեցի, որ ես էլ քաղցած եմ և
նոյնպէս սկսեցի նախաճաշել:
Ես ամբողջ երկու խոտ կերայ և կասես ոչ
մի անխիղճ բան չզգացի: Ինչ արած՝ իմ մէջ
վատ սովորութիւն էր գոյացել ամեն օր ու-
տել, ինչպէս ամենքն էին անում: Կշտանա-
լուց յետոյ ես քիչ հանգստացայ, դունչս սըր-
բեցի ու սողացի առաջ: Ճշմարիտն ասած՝
Ես շատ ուրախ էի, առանց որևէ պատճառի
ուրախ, որտեղ ցանկանում եմ, սողում-զնում
եմ: Զէ՞ որ աշխարհը այնպէս գեղեցիկ է, իսկ
իրանց խելքով հպարտ մարդիկ նրա գե-
ղեցկութեան մասին հասկացողութիւն չունին,
որովհետեւ ամենալաւ ժամանակը՝ գիշերը նը-
րանք քնած են: Սակայն գիշերն է, որ կեանքը
եռում է:

Ես այժմ մինչև անզամ ծիծաղում եմ յիշելով, որ գեռ երէկ կարծում էի թէ բոլորովին միայնակ եմ... Երկորի ամեն մի վերջոկ տարածութիւնը իւր կեանքն ունէր։ Ամեն տեղ

բոնուած էր և ամենը շտապում էին ապրել։ Ես էլ սաստիկ փափագում էի ապրել։ Զէ՞որ ամառային զիշերները այնպէս կարճ են և ակամայ պէտք է շտապէի։ Իսկ ես այսպիսի փոքրիկ ու աննշան ճիճում, նոյնպէս վռազում էի առանց ինձ հաշիւ տալու, թէ ուր եմ շտապում և ինչու համար։ Ես սողացի միշտ դէպի առաջ, անցնելով իսոտերի ցօղունների վրայից՝ փոսերից ու զանազան արգելքներից, որոնց կասես մէկը յատկապէս շինել էր միմիայն նրա համար, որ իմ սողալուն արգելք լինի։

“Երէկ գիշերը ես շատ բան իմացայ, ինքս
ինձ երևակայեցի, այսօր հաստատապէս ամեն
բան կիմանամ... յայտնի է՝ որ ճանապարհոր-
դութիւնը ամենալաւ դպրոցն է»:

Եւ իրօք՝ ամեն մի բայլ առաջ գնալով՝
աշխարհը իմ աչքերի առաջ բացուեցաւ իւր
բազմազան կողմերով։ Այն՝ որ դեռ երէկ զար-
մացնում էր ինձ, այսօր սովորական բան էր
թւում, ինչպէս երէկուայ Սունկն ու Խխուն-
ջը... ևս նրանց մօտից սողացի ու բարեեցի։

— Դէ, ինչպէս է առողջութիւնդ, ծերուկ,
հարցրի ես:

— Դարձեալ նոյնը... տիսրագին պատաս-
խանեց Սունկը։ Այսօր մրջիւնները մօտս եկան
և հաւատացնում են, որ նրանք իմ լաւ բարե-
կամներն են, բայց հէնց դրանք են իմ արմատ-
ները քչփորում։ Գոնէ Խխունջն էլի լաւ էր,

նա իմ վերեից էր ուտում. Այս, եթէ ես էլ կարողանայի քեզ պէս սողալ... էլ ուրիշ ոչ մի բան չէի ցանկանայ և բոլորովին երջանիկ կը- լինէի: Իսկ այժմ մի տեղի վրայ նստիր, ասես թէ վրան կարած լինես...

— Յտեսութիւն, հոգեակս: Ես շտապում եմ, ասացի: Երկում էր, որ Սունկը ցանկանում էր ինձ հետ խօսել, բայց ես ականջ չդրի: առաջինը՝ որ միշտ ձանձրալի է ուրիշի գանգատ- ները լսել, իսկ երկրորդը՝ ես ինքս մըջիւննե- րից վախենում էի: Այդ կտրիճները մէկ էլ տեսար՝ ոտներիցդ բռնած՝ իրանց մըջնոցը քաշ տուին:

Ես աւելի հեռու սողացի և շուտով բոլո- րովին մոռացայ բարի ու անբաղդ Սունկի տը- խուր ճակատագրի մասին: Ճանապարհին ինձ միքանի նապաստակներ էլ հանդիպեցին, բայց ես նրանցից չվախեցայ, մանաւանդ փորերից: Ինչպիսի սիրուն ու անվնաս կենդանիներ են դրանք և ինչպէս կարող են մարդիկ դրանց սպանելու մէջ համոյք զգալ: Վազգում են, թոշկոտում, գլխի կոնճի տալիս, միմեանց ետե- ից վազում... իսկական երեխաներ. միայն այն տարբերութեամբ, որ երեխաները երբեմն չար են լինում, բայց չար նապաստակ դեռ ոչոք չէ տեսել: Ի դէպ՝ փորբիկ նապաստակներն այն- քան խաղացին, որ իմ հին բարեկամ Սուն- կին վայր գլորեցին: Այդ բոլորովին մի պատա-

հական բան էր և նրանց կողմից առանց Արևէ շար մտադրութեան:

— Միևնոյն է, նա երկու-երեք օրից ինքն իրան պիտի փթէր, իրան արդարացրեց մի ճար- պիկ փոքրիկ նապաստակ: Բոլոր սունկերը միանման են...

— Այս, երբ աշխարհում ապրելով ընտե- լանում ես այս ու այն բաներին և խորը նայում, գլուխդ շուր ու մուռ է գալիս: Մտա- ծում ես, մտածում և չես կարողանում հաս- կանալ: Իսկ ես սիրում եմ մտածել:

Հազիւ թէ տասը քայլ հեռացել էի գետնին պառկած Սունկից, որ ծանօթացայ մի սիրուն ծիծաղաշարժ դաշտային մկան հետ: Նրա դըն- չիկը սուր էր, սև աչքերով ու սև բեխերով, այնպէս արագ վազում էր. կասես անտեսա- նելի անիւների վրայ սրընթաց գնում էր իւր ետևից էլ բարակ ու ծիծաղելի պոչը քարշ տա- լով: Մուկիկը երեկ սիրում էր հանաքներ ա- նել, որովհետեւ ինձ որ տեսաւ ուղղակի յայտ- նեց. «Ես քեզ կուտեմ»:

Ես կծիկ դարձայ և ըստ սովորութեան մե- ռած ձևացայ: Մուկիկը ծիծաղեց բարակ ու նուրբ ձայնով, ըթով ինձ հրեց ու ասաց.

— Լաւ, մի կեղծիր: Առաջինը՝ ես կուշտ եմ, իսկ երկրորդը՝ ես բացի բաղցը ար- մատիկներից ուրիշ բան չեմ ուտում: Դէ, բա- ւական է, շուր եկ... Ահ, ինչ յիմար ես...

Մուկիկն այնպէս սիրունիկ էր, որ ես
շուռ եկայ և բաւական համարձակ ասացի.

—Դու իզուր ես կարծում, որ ես վախե-
ցայ: Աշխարհում ես ոչ մէկից չեմ վախենում:

—Ոչ մէկից: Ուրեմն աւելի լաւ: Արի ինձ
մօտ հիւր գնանք:

—Ինչու չէ, ուրախութեամք:

—Ես այստեղ մօտ եմ ապրում: Սողա իմ
ետեից...



գ



Մկան տնակը, յիրաւի, բոլորովին
մօտ էր,

Ես ներս սուրացի մօտիկ անց-
քով և ոչինչ չնկատեցի, այն-
պէս նա ճարտար շինած էր և չոր տերեներով
ու ձղներով ծածկած:

—Ահ, եթէ իմանաս, որքան թշնամիներ ու-
նիմ, տխրութեամք ասաց Մուկը, իւր առա-
ջից ինձ բոյնը ներս թողնելով: Ստիպուած ենք
թագնուելու... Տեսար քիչ առաջ ինչպէս բա-
զէն ընկել էր նապաստակի ետեից: Նա մեր
գլխաւոր թշնամին է, իսկ յետոյ կան և ուրիշ
շատերը: Մինչև անգամ լճի գայլաձկներն էլ
մկներ են կուլ տալիս:

Ես մկան տնակը շատ հաւանեցի, թէ՛կ
մտնելու անցքը ճիշտ է, նեղ էր, բայց յետոյ
լայնանում էր և բաժանւում միքանի սենեակ-
ների:

—Ահա այստեղ ես սերմեր եմ դարսում,
որը հաւաքում եմ ձմեռուայ համար. բա-
ցատրեց Մկնիկը մի ամբողջ սենեակ ցոյց տա-

լով։ Զմեռը երկար է և պէտք է մի բան ուտել։
Իսկ իմ ընտանիքը մեծ է և ամենքին հարկա.
ւոր է կերակրել։ Ահա այն սենեակում պահ-
ւում են ամենաընտիր արժատները, հեռուն—
քաղցր խոտը...

— Ինչպէս լաւ տնտես ես, Մկնիկ, ասացի
ես։

— Ինչ արած՝ ակամայ պէտք է տնտես
դառնաս, երբ ստիպուած ես ամբողջ ձմեռը
գետնի տակ անցկացնել։

— Իսկ ձեզ համար տիրուր չէ անցնում։
Մկնիկը ծիծաղեց։

— Ոչ, ես բաւական զուարճութիւններ
ունիմ։ Առաջ սողա ու ինքդ կրտեսնես։

Մկնիկի «զուարճութիւնը» ամենայետին
ծայրումն էր։ Ես զեռ բիշ առաջ ինչ-որ ծրւ-
ծւոց լսեցի, որը յետոյ կտրուեց։

— Ես եմ, երեխաներ, կանչեց Մկնիկը։ Տե-
սէք ձեզ մօտ ինչ հիւր եմ բերել։

Խոստովանը լինի ասել, ես շատ վախեցայ,
երբ մթան միջից ինձ վրայ ընկան վարդագոյն
մկնիկներ և սկսեցին կոճղի պէս ինձ գետնի
վրայ ոլորել։

— Հանգարա, զաւակներս... նրանց կանգ-
նեցրեց Մկնիկը։ Դուք շատ մի ուրախանաք,
թէ չէ կարող էք ճիճուին ջարդել։

Բայց մկնիկները դարձեալ կողերս լաւ
արորել էին։ Մի փոքր էլ և ահա ինձ բոլորո-



վին կըխեղղէին։ Կարմիր, իսկական սատանայի ճտեր։ Առհասարակ այդպիսի բաները թեթևա-
մտութեան նշաններ են, իսկ ես լուրջ ճիճու-
եմ և չեմ սիրում այդպիսի ծայրահեղ զուարճու-
թիւն, թէև դուր է գալիս նայել, թէ ինչ-
պէս են ուրախանում երեխաները։

— Մ՛հ, ինչ ծիծաղելի ճիճու է, մկնիկները
սաստիկ ծւծւացին։ Մէջքի վրայ ձգեցէք… քա-
շեցէք ոտներից… տեսնենք փորում ինչ կայ։
Հաւանական է, որ այնտեղ մի գաղտնիք կայ, որ
ստիպում է նրան այսպէս ծիծաղելի կերպով
սողալ…

— Ո՛չ, այդ արդէն բաւական է, բղաւեց չա-
րացած Մուկը և ամենից համարձակ մկնիկի
պոչը այնպէս բռնեց շպրտեց, որ նա շատ հե-
ռու ընկաւ։

Այո՛, թանկագին հիւրի դրութիւնը շատ
ախորժելի էր։ Մէջքի վրայ պիտի ձգէին ու փորը
ճղէին… Բայց ես այնպէս դէմք ցոյց տուի, իբր
թէ չեմ բարկանում։ Կարելի է արդեօք սիրու-
նիկ երեխաների վրայ չարանալ, մինչև անգամ
եթէ նրանք ցանկանան քեզ գնդասեղի վրայ
անցկացնել։

Մուկն աշխատում էր իւր ճուտերի յիմար
արարքը կոկել և հիւրասիրեց ինձ ամեն բա-
նով, ինչ որ ունէր։ Ես քաղցր արմատներ ծը-
ծեցի, երեք ինչ-որ համեղ հատիկներ կերայ և
ընդհանրապէս աշխարհիս ամենահարուստ թա-

դաւորի պէս լաւ փառաւոր կշտացայ: Ինչ ա-
րած՝ սիրում եմ ուտել...

— Մինիկ, լաւ նիստ ու կաց ունիս, գովեցի
ես ուտելուց յետոյ:

— Լաւ է, խօսք չկայ, բայց շատ նեղու-
թիւններ կան, գանգատուեց Մուկը: Տուն ես
շինում, պաշար հաւաքում, մէկ էլ տեսնում ես,
հողաճիճուները պատդ բերեցին: Թէ հողն է
թափում, թէ բամին փչում ամեն տեղից և որ
գլխաւորն է խոնաւութիւն է առաջ գալիս և
մինչև անգամ ջուր մտնում: Խսկ ես ամեննին
չեմ կարողանում տանել: Բոլոր պաշարը սկսում
է փթել, ճտերս մրսում են... Ճիճուների հետ ան-
դադար կոռի մէջ եմ. այդ բաւական չէ, այժմ
էլ մի խլուրդ է լոյս ընկել... այնպէս մեծ է,
թաթերը ուժեղ, ինքը շատ ուտող: Նա իւր հա-
մար որջ քանդելիս՝ ճանապարհին թաթով իմ
տնակն ևս քանդեց ու իմ բոլոր պաշարը կե-
րաւ: Ինձ ու իմ ընտանիքին ամբողջ ձմեռը
բաւական կըլինէր, բայց նա միանգամից կե-
րաւ: Եւ ես յետոյ ամբողջ ձմեռը բաղցած
անցկացրի...

Մուկը շատ ցաւեր ունէր: Թէ բազէները թէ
ագուաները, առնէտներն ու աքիսները նրան
շատ են նեղացնում:

Երբ ես մնաս բարեասացի, Մուկն ինձ ու-
ղեկցեց մինչև գուռը և ասաց.

— Տես, զգոյշ կաց գիշերամուկից... Այստեղ
ծառերի փշակներում նրանցից շատ կան:

— Նրանք ինչպէս են:

— Ինձ պէս մուկ, միայն թերով: Նա
միայն գիշերներն է թուչում:

Կրկին նոր վտանգ: Ես մինչև անգամ տըխ-
րեցի դրա վրայ:



հէնց այն խոտը, որ ես աւելի եմ սիրում.
յետոյ այդ մէկը ամեն տեղ ջուր է թափեր, որ
ես կարողանամ իմ ծարաւը յագեցնել. Խոստո-
վանք լինի ասել, չնայելով բոլոր յարմարու-
թիւններին և առաջին երկու գիշերուայ ըն-
թացքում իմ ունեցած ահազին ծանօթու-
թեան, ես մի քիչ տիրութիւն էի զգում. Իհարկէ
սկզբում ամեն բան ինձ հետաքրրում էր,
իսկ յետոյ ես այնքան շատ բան իմացայ, որ
չէի ուզում աւելին գիտենալ. Չես էլ կարող
ամենը յիշել՝ ճիճուներ, մժեղներ, պղոճներ, թի-
թեռներ, մողէններ, թուչուններ, զորտեր, օձեր
ու հազարաւոր արարածներ, որոնք միմիայն
գիշերներն են կեանք ցոյց տալիս. Ես մինչեւ
անգամ դադարեցի իմ հին ծանօթներին ծանա-
չել:


— Ե՞ս, բարով, լուսատոիկ:

— Բարով... պատմախանում եմ, բայց ինքս
էլ չզիտեմ, թէ ինչ անուն տամ ծանօթիս. Այն,
ինձ չափից զուրս ձանձրացրին այդ նոր անձ-
նաւորութիւնները և ես աշխատում էի այլես
ոչոքի հետ ծանօթութիւն չանել. Միմիայն
ժամանակգ զուր ես կորցնում, երբ խօսքի ես
բռնւում: Ճանապարհին ես մի սիրուն փոք-
րիկ մողէսի պատահեցի—ինչպէս էր նա կը-
պել ինձ. կամ պոչն էր խաղացնում, կամ
կծկւում օղակի պէս և քաղցր նայում:

— Լուսատոիկ-ճիճու, արի ծանօթանանք,

ԵՐՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Ա.



Այս երրորդ գիշերուայ մա-
սին ես երբէք չեմ կարող մոռա-
նալ. Ես վերջապէս ամեն բան
իմացայ: Այս...

Եերեկը ես քնեցի ինչպէս և
առաջ և զարթնեցի միայն այն
ժամանակ, երբ քաղց զգացի: Իսկ
խմել աւելի էի ուզում: Երեկոյ-
եան ցող չէ լինում և ես ջուր
պտրտելու սողացի: Զարմանալի
է թէ աշխարհում ինչպէս ամեն
բան կարգաւորուած է. Ջուր ես
ուզում—ահա քեզ ջուր, ուտել ես ուզում—
ահա քեզ խոտ: Ինձ այնպէս է թւում, որ այս
ամենը մէկը առաջուց կասես ինձ համար է
պատրաստել, որ մէկը վազօրօք ինձ համար
հոգացել և սպասել, ինչպէս մի թանկագին հիւ-
րի: Այս մէկը ցանել ու բուսցրել է խոտը և

— Ներեցէք, ես ժամանակ չունիմ: Այս սահմանը...
— Գոնէ մի քիչ խաղանք...
— Ես արդէն ծեր եմ խաղի համար:
— Ահ, ինչ յիմար ես...

Այդ չարաճճին թաթով ինձ մէջքիս վրայ գարձրեց ու ինքը փախաւ: Արի ու այսպիսի կապ կտրածների հետ ծանօթութիւնարա: Մէջքիսը նկած ժամանակը ես դժուարութեամբ եմ նորից շուռ գալիս, մանաւանդ երբ կուշտ կերած եմ լինում: Դրա համար էլ ուրիշները ծիծաղում են վրաս: Այդ էլ դուրեկան չէ: Որպէս զի կըկին ոտքի կանգնեմ, նախ հարկաւոր է կողքի վրայ պառկել, յետոյ կուչ գալ և պոչով մի ուժեղ շարժում անել:

Տէրը փրկէ, եթէ որևէ փոսի մէջ ընկար, այն ժամանակ էլ չես կարող դուրս գալ: Ես երկար շուռ ու մուռ եկայ, մինչեւ կրկին կարողացայ սողալ: Ես զիտէի, որ մողէսի արածը կատակ էր, բայց այնուամենայնիւ բարկացայ վրան: Յետոյ յիշեցի, որ ամենքը, որոնք բարկանում են, դէմքի յիմար արտայայտութիւն են ստանում: Սողացի մի ջրալից փոսի մօտ, նայեցի իմ վրայ, ինչպէս հայելու մէջ և տեսայ, որ բոլորովին յիմար ճիճու եմ:

Պէտք է ասել, որ սառը ջուրն էլ շատ լաւ է ներգործում, երբ բարկացած ես լինում: Խորհուրդ եմ տալիս ամենքին ինչքան կարելի է շատ խմել: Ես այս բանն անձամբ փորձել:

Եմ վրաս և կարող եմ համարձակ ուրիշներին առաջարկել: Պարոններ, ցուրտ ջուր շատ խմեցէք և ամենքդ հաշտ ու խաղաղ կըլինէք աշխարհում:

Այսպէս ես ցուրտ ջուր խմեցի և իսկոյն ուրիշ պատկեր ընդունեցի, մինչեւ անգամ շատ սիրուն լուսատիկ դարձայ և շարունակեցի առաջ սողալ, թէս մի առանձին գործ էլ չունէի: Ինչպէս յետոյ երևաց ես բոլորովին չէի հասկացել, թէ ինչ է կեանքը և ինչպէս բոլոր տգէտները հաւատացած էի, թէ արդէն ամեն բան գիտեմ: Օրինակ՝ ինձ ամենքն անուանում էին լուսատիկ, բայց ես չէի հասկանում, թէ այդ ինչ է նշանակում: Շուտով ես ամենը հասկացայ:



համեստ կերպով նստել էին խոտերում և չէին
ցանկանում շարժուել, իսկ միւսները սողում
էին չորս բոլորը:

— Ի՞նչ բան ունիս այստեղ, բաւական ան-
քաղաքավարի հարցը ինձ սողացող լուսատը-
տիկներից մինը:

— Ես... այնպէս... յանցաւորի պէս մըմնջա-
ցի ես: Ես էլ լուսատիկ եմ... Ես միայնակ շատ
տիսուր էի ու սողալով սողալով հասայ այստեղ:

— Դէ, աւելի հեռուն սողա:

— Իսկ եթէ ես չեմ ցանկանում...

Պէտք է ասեմ, որ այս լուսատիկը շատ
կոպիտ էր և այդ ինձ շատ տիսրեցրեց: Հէնց
պատահեցի իմոնց, և ահա ինձ քշում են: Բո-
լորովին անբաղաքավարի է... Ես ակամայ յի-
շեցի բարի մկան և բարի հողային ճիճուին.
Թէկ նրանք բոլորովին օտար էին ինձ, բայց
և այնպէս բարի: Իսկ եթէ նրանք կարողանային
լոյս ևս տալ, հիանալի կըլինէր:

— Դէ, ի՞նչ ես կանգնել, շարունակեց կոպ-
տաբար լուսատիկը: Գնա ճանապարհող...

— Թողէք մի քիչ մտածեմ, ասացի ես ա-
մենաքաղաքավարի կերպով:

Կարծեմ վիրաւորական մի բան չասացի,
բայց լուսատիկը սաստիկ բարկացաւ և ես
նկատեցի, ինչքան որ նա սաստիկ էր բարկա-
նում, այնքան պայծառ էր գառնում նրա կա-

Բ

Յիշանցից յանձնաւած եմ բազայ և սաղի նո-
ւոյ ուսուցան ուղարք պամողաք շախահանու-
շա զամայի բարօն ու աշում բարձիս և զշի

Ես սողացի դէպի լիճը, որտեղից զով էր
փչում և ինչքան մօտենում էի ջրին, այն-
քան խոտը թէ խիտ էր և թէ հիւթալի: Քիչ
էր մնացել ափին հասնէի, երբ յանկարծ մի
բոլորովին անսովոր բան ընկաւ աչքիս: Ա-
ռաջին անգամ ես այնպէս կարծեցի, թէ
խոտն է, որ այդպէս կանաչ գոյնով լոյս
է տալիս: Իմ տեսած բոլոր հրաշալիքներից յե-
տոյ, դժուար թէ որևէ անսովոր բանով զար-
մանայի: Այս, իմ աչքով տեսել էի, թէ գիշեր-
ները ինչպէս են լոյս տալիս փայտոջիների մի
տեսակը: Ինչու խոտերն էլ լոյս չտան: Բայց
ինձ զարմացրեց այն, որ կանաչ կրակ-
ները խոտերի մէջ շարժւում էին, իսկ խոտը
ինքն իրան անկարող է շարժուել:

— Էնէ, այստեղ մի գաղտնիք կայ, մտա-
ծեցի ես ու քայլս արագացրի:

Յուզմունքից ու արագ շարժումից մինչև
անգամ շունչս սկսեց կտրուել: Բայց այն, ինչ
որ տեսայ, ինձ բոլորովին ապշեցրեց: Երեակայ-
եցէք, բոլորովին ինձ նման ճիճուներ և ա-
մեն մէկի պոչի վըայ կասես մի կանաչ լապ-
տեր է կպցրած: Լուսատտիկներից միքանիսը

Նաչ լապտերը: Նա սպառնալից մօտեցաւնինձ
ու բղաւեց:

—Կորիր այստեղից. լսնում ես: Ապա թէ ոչ
ես կատակ չեմ սիրում, մէջիցդ կէս կանեմ
ու կուտեմ...

—Թոյլ տուէք... ես... այսինքն մենք... կըմ-
կմացի ես յետ քաշուելով: Կարծում եմ, որ ոչ-
ոքի վատութիւն չեմ արել:

—Դու գեռ համարձակւում ես խօսել, թա-
փառական...

Եւ նա վագրի նման վրաս յարձակուեց...
Ես զգացի, ինչպէս նրա սուր ատամները խըռ-
ւում են կաշուիս մէջ, և աշխատում էի ազա-
տուել:

—Լսեցէք, չէ որ ես էլ կարող եմ կծել,
կանչեցի ես: Ես ձեր ոտը կըկրծեմ...

Ես այժմ ամաչում եմ այս տեսարանը յիշել:
Ինքներդ դատեցէք, ինչ մի լաւ բան է,
երբ երկու լուսատափկներ կուռում են, բղա-
ւում և միմեանց ամենավատ խօսքեր ասում:
Մենք մէկ մէկու կցուած՝ գլորւում էինք գետ-
նի վրայ, երբ մի բարակ-բարակ ու այնպիսի
քաղցր ձայն բարձրացաւ, որ մինչև այժմ նը-
մանը չէի լսած:

—Պարոններ, չէք ամաչում... Ձեր մասին
միւս լուսատափկները ինչ կըմտածեն... Հազիւ
թէ հանդիպել էք և նոյն ժամին կուռում: Ահ,
ինչպէս ամօթ է...

—Այդ նա է, ես չեմ. իմ թշնամին յանդ-
գնաբար արդարացրեց իրան: Առանց աջ ու ձախ
նայելու վրաս է ընկել ու կրծում իմ ոտը:

—Սուտ է, բղաւեցի ես: Այդ նա է... այո,
նա... նա չար է:

—Ոչ, ես չեմ. աւելի բարձր գոռաց նա:
Սա ամբողջ աշխարհի մէջ միակ ամենավատ-
թար ճիճուն է...

Մենք կուռան աշակերտների պէս արդա-
րացնում էինք մեզ, յանցանքը մէկս միւսի վրայ
ձգելով:

—Լաւ, լաւ, ասաց նոյն բարակ ու հրաշա-
լի ձայնը, երկուսդ էլ արժէք միշեանց...

Ես միայն այժմ նկատեցի, ով էր այդ խօ-
սողը. նա էլ լուսատափէ էր, միայն փոքր և
այնպէս սիրունիկ, որ ես մինչև անգամ կաս-
կածում էի, թէ այդպիսի գեղեցիկ լուսատը-
տիկներ կարող էին լինել աշխարհում: Ես նայ-
եցի նրան և մի այնպիսի հաճոյք զգացի, այն-
պիսի հաճոյք, որ մինչև կեանքիս վերջը կընայ-
էի նրան:

—Ով որ ձեզանից խելօք է, թու նա առա-
ջինը ներողութիւն խնդրէ, առաջարկեց նա:

Ինչպէս յայտնի է, ես բոլորովին արդար
էի, բայց սրտանց ասացի.

—Մեղաւորը միայն ես եմ...

Իմ թշնամին ամենաչար ծիծաղով հռհռաց
և սողալով ասաց.

—Ինչ տխմարն է այս ցածահողի լուսա-
տափկը... ահ, ինչքան յիմար է:

բայց մնանակ եմ անձ ու չ առ քան ին
պահ ու իս ընտու մնայի զազրացարդս զազամք
պահ եմ և ունեմ ու լինեց ժամանակական
գ և զայ ու ան



Ենք երկուսս մնացինք: Այս իմ
կեանքի ամենաբաղաւոր ըռպէն
էր: Գեղեցկուհի-լուսատտիկը իմ
ընկերուհիս եղաւ: Այս, սա այն
արարածն էր, որ պակասում էր
ինձ և որը իմ կեանքը բաղաւո-
րութեամբ լցրեց: Մենք վճռեցինք միասին
ապրել և երբէք չբաժանուել իրարից:

Ես ծիծաղում էի, թոշկոտում, ուրախու-
թիւնից գլորում և բոլորովին չնկատեցի, թէ
ինչպէս կատարեալ լուսատտիկ դարձայ, այ-
սինքն՝ ինչպէս իմ մէջքի վրայ ևս նոյնանման
կանաչ լապտեր լոյս ընկաւ, ինչպէս որ միւս
իսկական լուսատտիկներն ունէին: Այդ շատ
գեղեցիկ էր և ես ակամայ սկսեցի հպարտանալ:

—Ի՞նչպէս գեղեցիկ ես, հիացաւ ընկերու-
հիս: Ես մինչև այժմ քեզ պէս գեղեցիկ լուսա-
տտիկ չեմ տեսել. իմացիր, որ աշխարհում ես
ամբողջ երեք օր է, որ ապրում եմ:

—Ես էլ նոյնպէս..., եւ ինչպէս զարմանալի
հանդիպեցինք իրար... Ահա թէ ինչ է նշանա-
կում ճակատագիր:

—Իսկ գու գիտե՞ս տնակ շինել, հարցրեց
նա: Առանց տնակի անկարելի է ապրել...

—Ո՞հ, ես ամեն բան կարող եմ: Առաջ փոս
կը փորեմ, յետոյ ամենափափուկ մամուռով
կը պատեմ, վերջը վերևից այնպէս ճարտարու-
թեամբ հին տերեւով կը ծածկեմ, որ ոչոք չի
էլ նկատի, թէ մեր տունը որտեղ է:

—Եւ ինձ ուրիշ լուսատտիկներից կը պաշտ-
պանես չէ: Նրանց մէջ էլ բաւական կոռւսէր-
ներ կան, ինչպէս այժմեանը...

—Ես... ես նրանց ամենին կուլ կը տամ:

—Ո՞հ, ինչ բայ ես... Այժմ ես քեզ աւե-
լի եմ սիրում:

Դուք մի կարծէք, որ ես պարծեցայ նրա
համար, որ ցոյց տամ ինձ լաւ կողմից, ո՞չ
ես միայն ասացի այն՝ ինչ որ իրօք զգում էի:
Ոհ, այդ ըռպէին ես ոչոքից չէի վախենում,
մինչև անգամ մրջիւններից և կեանքս ուրա-
խութեամբ կը զոհէի՝ իմ ընկերուհուն պաշտ-
պան կանգնելով: Ճիշտ է՝ առաջ ես տուն
շինած չէի, բայց իսկոյն հասկացայ, որ պէտք
է շինեմ, ինչպէս իսկական տղամարդ-միջու:
Միքանի ըռպէյում մենք այնպէս ծանօթ ե-
ղանք, կասես մեր կեանքը միասին է անցկա-

ցել։ Մինչև անգամ մեր մտքերն ու խօսքերը
միանման էին։

—Այս, ես էլ հէնց այդ միևնոյնը պիտի ա-
սէի... կրկնում էր նա բաղդաւորութիւնից
ժպտալով։ Այս, հէնց այդ։

Այո՛, ես երջանիկ էի։ Ո՞հ, ինչ որ կար
շուրջս, բոլորն իմն էր և ամեն ինչ միմիայն ինձ
համար գոյութիւն ունէր։



ՅՈՐՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Ա



Ս չգիտեմ՝ կարիք կայ ձեզ պատ-
մելու, թէ ինչպէս բաղդաւոր
էի... խոստովանում եմ, որ ես
մինչև անգամ յարմար խօսք չէի
գտնում, որ մօտաւորապէս ար-
տայայտեմ այն ամենը, ինչ
որ զգացի ու բաշեցի։ Այդ մի բաղդաւոր
երազ էր... Առաջ մէկը չկար, որի հետ փոխա-
նակէի իմ մտքերը, իսկ այժմ ամբողջ գիշերներ
մենք անդադար խօսում էինք։ Նա, իմ սիրելի
լուսատիկն էլ քիչ փորձանքների չէր հանդի-
պել և իւր արկածների մասին զարմանալի սրտա-
շարժ կերպով էր պատմում։ Պէտք է նկատեմ,
որ նա թէև ճիճու, այնուամենայնիւ կին էր,
իսկական կին, զրա համար էլ քիչ վախկոտ էր։
Հէնց որ մի բան էր լինում, «Այս, վախում
եմ»... Այդ բանը երբեմն ինձ զրգուում էր,
նրա վրայ բարկանում էի և ինձ օրինակ բե-

բում, որ ոչ մի բանից ու ոչոքից չեմ վախենում:

—Նրա համար, որ դու տղամարդ ես, արդարացնում էր իրան ընկերուհիս:

—Այո՛, բայց այնուամենանիւ...

Այժմ ամաչում եմ, որ ես մի քիչ պարծենկոտ էի, այսինքն՝ ոչ բոլորովին պարծենկոտ, այլ կարծես այդ ինքնաբերաբար էր դուրս գալիս: Օրինակ՝ ես չյայտնեցի թէ ինչպէս մըջիւններից քաշուեցի, ինչպէս մեռած ձևացայ, ինչպէս նապաստակից զախեցայ. միթէ քիչ այդպիսի գէպքեր կային, երբ իմ տղամարդի քաջութիւնը վտանգի էր ենթարկվում: Այն ինչ՝ ես անտաշ ճիճուից չվախեցայ ու նրա ուր կրծեցի, յետոյ ես պատրաստ էի հէնց այժմ իմ կեանքը տալու միայն նրա համար, լուսատիկներից ամենալաւին պաշտպանելու համար: Ճշմարիտ՝ ես չեմ ստում և չեմ աշխատում ինձ լաւամարդի շինել: Նա ցոյց էր տալիս, որ հաւատում է ինձ ու հիանում:

—Ախ ինչքան հաճելի բան է քաջ լինել... Առհասարակ նա ինձ շատ էր սիրում և այնքան ինամբ տանում, որ մինչև անգամ ինձ ձանձրացնում էր:

—Ոչ մի տեղդ չէ ցաւում, կպչում էր ինձանից:

—Ոչ, կարծեմ բան չկայ...

—Դէմք մի տեսակ է...

—Ի՞նչպէս...

—Հիւանդի... լաւ կըլինի որ ահա այն կանաչ խոտն ուտես: Նա կօգնէ...

—Ես ասում եմ, որ բոլորովին առողջ եմ, տաքանում էի ես:

—Հաւատում եմ, հաւատում: Բայց իմ խաթթեր համար արա... Դէ, միթէ դժուար է մի հատիկ խոտ ուտել:

Միթէ կարող ես կնոջը համոզել: Ես կուշտ էի, այնուամենայնիւ սիրտ խառնելու չափ ուտում էի այդ յիմար խոտից:

Յետոյ նա ինձ համբերութիւնից հանում էր, պատմելով ինչ-որ ձեանհաւի (քանիկ) մասին, որ հարիւր անգամ կրկնել էր:

—Այդ սարսափելի գէպքերը, պատմեց նա աչքերը վակելով, ես մինչև անգամ այժմ իսկ գողում եմ յիշելուց... ինարկէ ես բոլորովին անփորձ էի և չէի հասկանում, որ մեր ամենակատաղի թշնամիները արել մտնելուն պէս քնում են: Ես երիտասարդին յատուկ թեթևամտութեամբ արել մտնելուց առաջ սողացի խոտերի մէջ... Խմել էի ուզում և սողացի գէպի լիճը, որտեղից երեկոյեան զովուէր փշում և յանկարծ... Ոչ, նրանից ահոելի բան չէ կարող լինել... Խոտը շարժուեց և իմ առաջմի հրէշ կանգնեց... Թու թոչուն տեսել ես:

—Մհ, այո՛: Քո հրէշը ձեանհաւն է, դեռ այն էլ ճուտը...

— Այո՛, այո՛, իսկական հրէշ։ Ահազին մեծութեամբ, երկու ահազին ոտների վրայ ու ահազին պարանոցով։ Իսկ կտուցը ինչպէս սարսափելի էր, նրանից վատթար բան չէ կարող լինել։

Նա նայեց վրաս իր սարսափելի աչքերով, սարսափելի կերպով երկարացը եց վիզը, ահռիլի կերպով բացեց կտուցը և ուզեց ինձ բռնել։

— Իսկ դու մեռած ձեացրիր քեզ։ Հա, հա... Ես միշտ այդպէս եմ անում, այսինքն ես տեսել եմ ուրիշները ինչպէս էին ձևանում։

— Լսիր, ինդրում եմ. ես ուշաթափուեցայ և կարծում էի թէ արդէն այդ հրէշը ինձ կուլէ տուել և չէի համարձակում աչքս բանալ, իսկ երբ ձանձարացայ անշարժ պառկելուց ու աչքերս բաց արի, նա այլևս չկար։

— Երկի նա էլ վախեցած կըլինէր և վախից մեռած։

— Դու ծիծաղում ես վրաս. ես քիչ էր մնացել իսկապէս մեռնէի: Երկարայիր՝ խոտը շարժւում է, նրա միջից մի սարսափելի վիզ է երկարանում ու երկու սարսափելի աչքեր ինձ վրայ չուում...։

— Այն, գիտեմ, գիտեմ... բաւական է...։

— Դու, կարծում եմ ուրախ կըլինէիր, եթէ այդ հրէշը ինձ կուլ տար, փնթփնաց նա: Այո՛, ես գիտեմ...։

— Միթէ ես այդպիսի բան ասացի քեզ։

Վերջացաւ բանը նրանով, որ նա մինչև անգամ լաց եղաւ, իսկ ես ներողութիւն խընդրեցի: Ինչ արած՝ կեանքի մէջ փոքրիկ թիւրիմացութիւններ շատ են պատահում: Ի պատիժ իմ անուշաղը ութեան նա կրկին պատմեց իւր հրէշի հետ հանդիպելու պատմութիւնը և ես այնպէս ձեացրի, որ բոլորը ուշադրութեամբ լսում եմ: Իհարկէ խարելն ու կեղծելը վատ բան է, այդ ես շատ լաւ գիտեմ. բայց եթէ ամենքին ստիպես միենոյն պատմութիւնը հարիւր անգամ լսել և միենոյն ժամանակ ստիպես, որ նա արտայայտէ և սարսափ, և բարկութիւն, և ցաւակցութիւն, և համակրանք-կարելի է խելազարուել։

Մի անգամ իմ անուշաղը ութեան համար իրանից դուրս գալով, ինձ մի սարսափելի խօսք ասաց՝ դու—վախկնա:

— Ե՞ս...

— Այո՛... ես կըցանկանայի նայել թէ դու ի՞նչ կանէիր այդպիսի հրէշի պատահելով։

Ես թաթով ընչացքս ուզեցի և հպարտ պատասխանեցի.

— Այո՛, ես էլ կըցանկանայի նայել ինձ վրայ...։

Իսկապէս ես հանաք արի. բայց սրանից մի շատ անհամ բան դուրս եկաւ, որ քիչ էր մնացել իմ մահուան պատճառ դառնար... Ոչ մի ժամանակ չպէտք է չափազանց շատ վիճել ու տաքանալ, որովհետեւ մի որևէ աւելորդ բան կարող ես բերնիցդ թոցնել։

Եսու ոչինչ չասացի և ցոյց տուած ուղղութեամբ համարձակ սողացի։ Նա իսկոյն իմ մըտադրութիւնը գուշակեց ու վազեց ետևից։

—Ո՞ւր ես գնում գժուածի պէս։


—Այ, կիմանաս... անգթաբար պատասխանեցի ես։ Կըտեսնես, թէ ես վախկոտ եմ։

Ինչեր նա չարեց. աղաչում էր, լաց լինում, թաթերով ինձ պահում, բայց ես անդըրդուելի մնացի։ Ես վախկոտ։ Տեսնենք։ Ինչ ուզում էք մտածեցէք, ես վախկոտ չեմ։ Ես սողացի հեռուն, աւելի հեռուն, ուղղակի անտառի ծայրը։

—Այդ ի՞նչ ես անում, աղաչում էր նա։ Այս ըսպէին այն հրէշը դուրս կըգայ հատապտուղներ ուտելու և քեզ կուլ կըտայ։

—Թո՞ղ կուլ տայ, միայն իմացած եղիր, որ ես վախկոտ չեմ։

Զարացած՝ առանց մտածելու առաջ ու առաջ էի սողում։ Բայց անտառի ծայրին հասնելով, ես արդէն հեռուից—պի-իկ, պի-իկ—մի չարագուշակ ձւձւոց լսեցի։ Ո՞հ, այդ սարսափելի հրէշների մի ամբողջ ընտանիք էր։ Նրանք կանաչ խոտերում ամենախաղաղ կերպով ըըճուճ էին անում, իսկ նրանց հրէշ—մայրը վիզը փայտի պէս երկարեցրած՝ արթուն հըսկում էր նրանց։ Երբ օդի մէջ որևէ թոչունի ստուեր էր անցնում, նա սարսափելի ձայներ էր հանում ու կրկնում։ «Սիրելի երեխայք,



հա թէ ինչ բան էր։ Մենք սմբ բողջ զիշերը վիճեցինք ու կըուեցինք։ Եսոչ մի կերպ չկարողացայ «վախկոտ» խօսքը մոռանալ։

—Ես, վախկոտ, կրկնեցի ես։ Լաւ, ես քեզ ցոյց կըտամ, թէ ինչպէս վախկոտ եմ։ Մենք այնքան վիճեցինք, որ չնկատեցինք թէ ինչպէս սկսեց արշալոյսը բացուել։ Զարթնեցին առաջին թոչունները, գետի վրայի մառախուղը շարժուեց տեղից, վերջին աստղերը հանգան, մի խօսքով հրաշալի առաւտ սկսաւ։

—Դու ձեանհաւերը որտեղ տեսար, անմեղ կերպով հարցրի ես։

—Այստեղից շատ հեռու չէ, անտառի ծայրում, ուր այնպիսի հրաշալի հատապտուղներ են լինում։

զգոյշ կացէք... Երեխայք, հեռու մի վազվզէք:
Երեխայք, բաղէն կարող է ձեզ բռնել...

Գրողը տանէ այդպիսի սիրելի ընտանիքը:
Իմ սիրտը ճաքեց, շունչս կտրուեց ինչպէս այն
ժամանակ, երբ տեսայ Գէորգի գնդասեղին ան-
ցրած կենդանի պղոճները:

Իհարկէ ես կանգ առայ ու մնացի քարա-
ցած: Հրէշի երեխաները շարունակեցին հա-
տապտուղ կտկտալ և միաժամանակ խոտերի
մէջ վխտող փոքրիկ ճանձիկներ կուլ տալ: Եւ
այդ այնպիսի անմեղ կերպով էին կատարում,
կասես չէին նկատում, թէ կենդանի արարա-
ծին կեանքից զրկում էին: Սրանից աւելի սար-
սափելի ինչ կարող է լինել, մանաւանդ երբ
ինքդ ես զգում, որ ահա-ահա քեզ պիտի բըռ-
նեն ու կուլ տան, դէ գնա այն ժամանակ յի-
շիր քեզ ուտաղին: Յանկարծ... Ոչ, ես խօսք
չեմ գտնում և չեմ էլ յիշում, թէ այդ ամենը
ինչպէս հետեաբար պատահեց: Բայց իմ ընկե-
րը տեսաւ, թէ ինչպէս հրէշներից մինը ճիւ-
ճիւ արեց ու ասաց.

—Պի-իկ: Արի այս ճիճուն էլ փորձեմ.
Կարծեմ համեղ պիտի լինի...

Յետոյ իմ սիրելի լուսատտիկն ինձ պատ-
մեց, թէ ինչ էր անցել գլխովս:

Հրէշը, ասաց նա, բացեց կտուցը, կտկտաց
ու քեզ բերանը ձգեց... Ես կարծեցի, որ հար-
ուածը ուղղակի գլխիդ հասաւ և սարսափից

աչքերս փակեցի: Ինձ այնպէս թուաց թէ ան-
վերջ դարեր անցան. յետոյ լսում եմ. «Պի-իկ,
այս ինչ անպիտան բան է, բոլորովին համ չու-
նի»: Հրէշը մի ուրիշ ճանձի ետեկից ընկաւ, իսկ
դու անշարժ մնացիր գետնին փոռւած: Ի՞նչ
անէի: Ամենից առաջ վազեցի դէպի ջուրը, մի
փոքրիկ խոտիկ կտրեցի, ցօղով թրջեցի և այդ
կենդանարար ջրից մի կաթիլ բերանդ կաթե-
ցըի: Առաջին խօսքը, որ ասացիր, այս էր՝ «Ես
այնուամենայնիւ վախկոտ չեմ»: Յետոյ զա-
ռանցանքի մէջ ընկար: Դու երևակայում էիր
թէ հրէշի քարճիկումն ես և սկսում ես այն-
տեղ փափկանալ, որ անցնես նրա ստամոքսը:
Գիտակցութիւնդ տեղն եկաւ միայն երեկոյ-
եան, երբ հովը փչեց: Իմ խղճուկս, ինչքան ես
տանջուեցի. երբ դու վերջապէս աչքերդ բա-
նալով հարցրիր՝ «Ո՞րտեղ եմ», ես քեզ համ-
բուրեցի ու ասացի.—«Դու ինձ հետ ես, իս
միակ լուսատիկ»... Ինչքան ես զղջացի, որ
քեզ վախկոտ անունը տուի: Ո՞վ կարող էր են-
թագրել, որ մի խօսքի համար այդպիսի ցա-
ւալի դէպը պիտի պատահէր: Ո՞հ, այժմ ես
զգոյշ կըլինիմ, շատ զգոյշ. Երբէք աւելորդ
խօսքը չեմ խօսի:

Այս դժբաղդ դէպըից յետոյ, ես ամբողջ
երկու օր անկողնում պառկած էի և բաւական
ժամանակ ունէի մտածելու: Եւ ես շատ բաներ
մտածեցի...

ՀԱՅԿԵՐՈՐ ԳԻՇԵՐ

Ա. ԵԼՅԱ Պահանջմանը

իւանդ լուսատափկ... գրանից
տիսուր ինչ կարող է լինել...
ինձ համար աւելի ցաւալի
էր, որ այդ հիւանդ լուսա-
տափկը ինքս էի: Երևակայ-
եցէք մի փոքրիկ փոսիկ,
անցած տարուայ թխտենու
տերենվ ծածկուած, իսկ տերեկի տակ անբաղդ
ճիճուն պառկած:

ՀԱՅԳԵՐՈՐԴ ԳԻԼԵՐ

U.



Ում սիրալ չի ցաւի այս պատկերը տես-
նելիս: Ես ինձ խղճում էի, ինչպէս բոլորովին
մի կողմանակի լուսատափկ. չ^թ որ հիւանդ լու-
սատափկ և առողջ լուսատափկ, երկու տարբեր
ճիճուներ են: Իմ կեանքը կասես երկու մաս
էր բաժանուած: Այն, ես ինձ վրայ իբրև կող-
մանակի անձն էի նայում ու դարձեալ խղճում,

որովհետև բոլոր միւս լուսատիկներն առողջ
էին և վայելում էին կեանքը։ Կարծում եմ յու-
սահատութիւնից կը մեռնէի, եթէ նա չլինէր,
իմ ամենալաւ և միակ ընկերը։ Ո՞հ, նա մի ըո-
պէ անգամ ինձանից չէ հեռացել ու բոլոր ժա-
մանակ միսիթարել է այնպիսի լաւ ու քաղցր
խօսքերով։

— ԶԵ որ ուրիշ լուսատտիկներն էլ հիւանդանում են, ասում էր նա իր հրաշալի ձայնով, և դեռ ինչպէս... Ես մէկին տեսել եմ, երեք ոտք պակաս էր և չէր կարողանում սողալ։ Մի ուրիշի աջքին մէկը չկար, երբորդին...՝ Միթէ քիչ դժբաղդութիւններ են պատահում լուսատտիկների հետ, մանաւանդ եթէ...
— Մանաւանդ եթէ ինչ...

— Դու չես բարկանայ, որ ասեմ։ Ո՞հ, լինում են և կամակոր լուսատախիկներ... բոլորովին կամակոր։

Հասկանում եմ թէ ում համար ես ասում...

— Քեզ համար չէ, ուրիշ լուսատիկների
մասին է խօսք:

Նա աշխատում էր ինձ հետ չվիճել, թէս
այդ հեշտ բան չէր։ Խեղճը ամեն ջանք գործ
էր դնում, որ ինձ չգրգռէ և ամբողջ ցերեկը
ոչ մի անգամ նա չյիշեց այն զզուելի ձեանհա-
ւերի մասին, կամես նրանք աշխարհում բնաւ
գոյութիւն չեն ունեցել։

Փոսիկում պառկած՝ անգործութիւնից եւ սկսեցի իմ շրջապատը ուսումնասիրել։ Կասէք թէ ինչ մի հետաքրքրական բան պիտի լինի, բայց այնուամենայնիւ այդ մի ամբողջ աշխարհ է։ Այն, մի աշխարհ, թէև փոքրիկ։ Բանը մեծութեան մէջ չէ։ Օրինակ՝ ինչքան լաւ էր փոսիկը ծածկող թխտենու գորշ տերել։

Ես ուշադրութեամբ ուսումնասիրեցի նրա կազմուածքը, բոլոր ջլերը, որոնցից ցանցի նման տերեկի կմախքն է կազմուել։ Ինչքան գեղեցկութիւն կայ այդպիսի մի տերեկի մէջ։ Իսկ նրա շուրջը կեանքը եւում էր։ Միքանի անգամ մօտեցան փոքրիկ սև պղոճներ և սև բեխերը շարժելով հարցրին.

— Դու դեռ կենդանի՞ ես, լուսատաիկ։

— Այն, դեռ կենդանի եմ...

— Լաւ... մենք յետոյ կըգանք, երբ կըմեռնես։

Այս շատ սիրալիր էր նրանց կողմից։ Դըրանք գերեզմանափոր-պղոճներ էին, որ եկել էին ինձ թաղելու։ Ես մինչև անգամ չկարողացայ նրանց վրայ բարկանալ։ Ինչ արած՝ ամեն մէկը երեկի իւր սեպհական պարապմունքն ունի։

Յետոյ գիշերը պառկած եմ ու զգում, թէ ինչպէս մէկը ներքնից հրում է ինձ։ Ես չհամբերեցի, բարկացայ։

— Ո՞վ է, բաւական չարացած բղաւեցի։

— Ախ, ներեցէք... թոթովեցին մանկական

բնըոյշ ձայներ։ Մենք կանաչ խոտիկներ ենք։ Քիչ ուշացանք հողի մէջ, ճիշտն ասած՝ բնով էինք անցել, այժմ շտապում ենք դէպի վեր... Դու մի փոքր այն կողմը բաշուիր, լուսատաիկ։ Խոտիկը այնպէս բաղաքավարի կերպով ինտրեց, որ ես ուրախութեամբ միւս կողքիս շուռ եկայ։ Անկեղծ ասած՝ դեռ երէկ ես մեծ բաւականութեամբ նրանց կուտէի, բայց այսօր ախորժակ չկար։ Ինչ արած՝ թող աճի, նրա բաղդն է։



է, որ չորս կողմը երեռւմ է։ Առաջ ես միայն
այն էի մտածում, որ միշտ սովամ առաջ ու
առաջ, իսկ այժմ ակամայ պիտի դիտէի շուր-
ջըս, թէ ինչպէս են ապրում ուրիշները։ Ահա
այդտեղ առաջին անգամ տեսայ Այծամարդին։
Նա անտառի մէջ քայլելով անցնում էր
ինչպէս մի ահազին ստուեր և վայրենի կերպով
հռհռում։

— Հօ-հօ-հօ։ Ամենքդ ծեր տեղերը բաշուե-
ցէք… էյ, դուք, կարճապոչ նապաստակներ,
պլղիկ բուեր, գորշագոյն գայլեր, ծուռթա-
թանի արջեր, ամենքն էլ այստեղ, Ի՞նչ է, ծեր
տիրոջը չճանաչեցիք… Այ, ես ծեզ ցոյց կրտամ։

Այծամարդը շատ բղաւեց, բայց ոչոք
ուշը չդարձրեց և ոչոք չմօտեցաւ նրան։
Չղջիկները պտոյտ-պտոյտ արին, կըկուն կու-
կու կանչեց, բուն քարի նման խոտերի մէջ
ընկաւ և այդքան միայն։ Յետոյ մի ծերունի
պասկուճ ծառի փշակից դուրս եկաւ ու բըռ-
քուաց։

— Բարով, Անտառի Թագաւոր… հա, հա հա…
ինչպէս ես։

— Ոչինչ, ապրում ենք, պարծեցաւ Այ-
ծամարդը ու իւր բաւականութեան համար մի
ամբողջ եղևնի արմատահան արեց, շուռ տուեց։
Ինձ ամենքը սիրում են, էլ ի՞նչ եմ ուզում։
Թէև մի փոքր վախենում են, բայց այնուամե-
նայնիւ սիրում են։ Գիտեն որ ես խիստ եմ…

Այս իմ կեանքի հինգերորդ գիշերն
էր։ Առաւօտեան դէմ ես պառկելուց
ձանձրացայ ու փորձեցի փոսիկից
դուրս սողալ։ Ոչինչ, մինչև վերև սո-
ղացի։ Այնպէս լաւ էր շուրջս, որ
մինչև անգամ կանչեցի։
— Ես չէ որ առողջ եմ, բոլորովին առողջ.
կեցցէ…

Իմ ընկերուհին յոզնածութիւնից ննջում
էր, նա սաստիկ վախեցաւ։

— Ի՞նչ է պատահել։ Ո՞րտեղ ես… ախ ինչ
անզգոյշ ես… Միթէ կարելի է այդպէս անել։

Ինչքան ուզում էի հաւատացնել նրան, որ
ես առողջ եմ, այնուամենայնիւ ստիպուած էի
հնագանդուել ու առաջ չսողալ։ Ի՞նչ արած՝
կարելի է փոսի մօտ էլ պառկել, այնքան լաւ

Հօ-հօ-հօ: Է՛յ, դուք թաւամազ ճագարներ, պո-
զաւոր եղջերուներ, փայտորիկներ, ձեանհաւեր
ու բոլոր մանրիկ թռչնիկներ, այստեղ եկէք:
Միթէ չէք ուզում ձեր տիրոջը ճանաչել:

Այծամարդը պարզասիրտ էր ու բարի. ա-
մենքը նրան սիրում էին և ոչոք ականջ չը-
դրեց. Բայց նա չտիրեց: Ինչ արած՝ որ չեն
լսում, բայց չէ որ «Անտառի Թագաւոր» անու-
նով են պատւում: Սկզբում վախեցայ, երբ
նրա հոհուցն ու քոքուցը լսեցի, իսկ յետոյ
ես էլ սիրեցի: Կասես մինչև անգամ անյար-
մար էլ կըլինէր, եթէ անտառը տէր չունենար:
Բայց այժմ գիտես, որ Այծամարդ կայ և բո-
լորովին հանգիստ ես:

Սակայն մի անգամ այսպիսի դէպք էլ տե-
սայ: Այծամարդի մօտ վազեց գեղեցկաղէմ
եղջերուն, որի ետևից էին ընկել գայլերը և
սկսեց աղաչել.

—Տէր, այս ի՞նչ բան է: Մենք գայլերի
ձեռքից չենք կարողանում քեզ մօտ անտա-
ռում ապրել... պաշտպանիր մեզ...

Այծամարդը սաստիկ ուրախացաւ ու այն-
պէս բղաւեց, որ նրա ձայնը անտառի ամեն կող-
մը հասաւ:

—Հօ-հօ-հօ... այստեղ եկէք ամենքդ: Լսեցէք
թէ ինչ է ասում ձեր տէրը: Հօ-հօ-հօ...

Առաջինը սանամայր—աղուէսը մօտեցաւ,
իւր թաւամազ պոչը տակը դրեց, նստեց մի

կողմ ու լպղտոտաց: Նրա ետևից յամրաքայլ
եկաւ փնթփնթան արջը ու չնթոնեց շարքում:
—Բարով, սանամայր:

Եկան երկարուտն կոռւնկները, մօտ վազե-
ցին ճագարները, թռան եկան փոքրիկ թռչնիկ-
ները, իսկ գայլերն ամբողջ խմբով հաւաքուե-
ցին:

Այծամարդը մի կոճղի վրայ նստած՝ ուրախ
հարցրեց.

—Ամենքդ էլ այստեղ էք... Դէ առաջ, եղ-
ջերու, դու ասա: Իսկ յետոյ գայլերը կըխօ-
սեն: Ես ձեզ կըդատեմ... Միայն տես՝ չխարես:

—Իսկ նրանք ինձ չեն ուտի, հարցրեց եղ-
ջերուն:

—Ոչ, չեն համարձակուի... իսկական ձըշ-
մարտութիւնն ասա:

—Ասելու առանձին մի բան էլ չունիմ, գան-
գատուեց եղջերուն: Ես երբէք ոչ մէկին չեմ
վիրաւորել... խոտ եմ ուտում, հանգստանում,
վազգում և դարձեալ հանգստանում եմ: Իսկ նը-
րանք, առանց որևէ պատճառի յանկարծ ետե-
ւիցս ընկան ու եթէ դուք չլինէիք, ինձ պատառ-
պատառ կանէին: Ահա ամենը,

—Բաւական է, վճռեց Այծամարդը: Այժմ
դուք խօսեցէք մոխրագոյն գայլեր: Ես ձեզ ձեր
բաջութեան ու ճարպիկութեան համար սիրում
եմ, բայց ճշմարտութիւնը ձեզանից թանգ է:
Գայլերը թէն քաջութեան ու ճարպիկու-

թեան կողմից յայտնի էին, բայց խօսել չգիտէին: Նստած լպսում են իրանց դնչերը, միմեանց հրում... և ոչ մի խօսք:

—Թոյլ տուէր ինձ, տէր, նրանց փոխարէն խօսել, մէջ մտաւ աղուէսը: Սյդ գործերը ես շատ լաւ եմ հասկանում:

Այծամարդը նայեց Աղուէսին, ծոծրակը քորեց ու ասաց.

—Քեզ լաւ եմ ճանաչում, սանամայր, Դուք բաւական խորամանկ ես... Է՞հ, խօսիր, տեսնենք:

Աղուէսն առաջ անցաւ ու սկսեց.

Ամեն ինչ կարելի է խօսել և ամեն մէկը իւր օգտին պիտի խօսէ: Այնպէս չէ, տէր:

—Այն, այդպէս է, սանամայր...


—Եղջերուն գանգատում է գայլերի վրայ, գայլերն էլ գուցէ քիչ անգամ չեն իրանց վրայ փորձել եղջերուի պողերն ու սմբակները, այնպէս չէ, տէր իմ,

—Այդպէս է, այդպէս է, սանամայր:

—Իմ մասին միթէ քիչ բաներ են գուրս տալիս...

—Դէ, իգուր ես այդ մասին խօսում, սանամայր, բո մասին ինչ որ ասում են ճշմարիտ է... Քո մուշտակը լաւ է, բայց համբաւդ վատ:

—Է՞հ ես գոռող չեմ ու չեմ վշտանում, որ իմ մասին զրախօսութիւն են անում: Տեղն եկաւ ասացի...



— Դէ, էլ մի երկարացրու, սանամայր, ըսկսեց բարկանալ Այծամարդը, Խօսում ես, բան խօսիր, ապա թէ ոչ զուր ժամանակ ես կորցնում: Տես ինձ մօտ խորամանկութիւն չքանեցնես...

— Ես իսկոյն, տէր իմ: Խօսքով երկար կըլինի հասկացնել, զործով պէտք է ցոյց տալ, որ ամենքը տեսնեն: Այն ժամանակ կերևայ արդարն ու մեղաւորը: Եղջերու, դու ցոյց տուր թէ ինչպէս էիր խոտ ուտում...

Եղջերուն մի կողմը բաշուեց ու սկսեց խոտ ուտել:

— Լաւ, զովեց աղուէսը: Այժմ զուք, զայլեր, ցոյց տուէք թէ ինչպէս նրա վրայ յարձակուեցիք:

Գայլերին էլ հէնց այդ էր պէտք: Նրանք ամբողջ խմբով ընկան եղջերուի ետևից, որը ստուերի պէս անյայտացաւ անտառում: Այծամարդը տեսնելով որ աղուէսն իրան յիմարացրել է, կատաղութիւնից պոկեց իւր տակի կոճղը և ուզեց խորամանկ աղուէսի գլխին տալ, բայց նրա հետքն անգամ չերևաց:

— Այ խաբեբայ, այ կու անպիտան... բղաւեց Այծամարդը աղուէսի ետևից ընկնելով: Ես նրան ցոյց կըտամ... Հօ-հօ-հօ...

Մի ժամից աղուէսը վերադարձաւ: Նա

Հազիւ էր շունչ քաշում այնքան լափել էր եղ-
ջերուի թարմ մսից:

— Ա-խ, ինչըան դժուար է աշխարհում ապ-
րելը, հառաչեց նա պառկելով։ Գայլերը եղջե-
րուին բռնեցին, ինձ էլ մի պատառ բնկաւ...

Աղուէսը դեռ չէր բնել, որ Այծամարդը
երևաց:

— Ո՞րտեղ է աղուէսը, գոռաց նա, Ես
նրան պատառ-պատառ կանեմ...

—Քեռի, ահա նա այնտեղ քնած է, վերմից ձայն տուեց ճագաբր:

— Այժմ քեզ հետ, սանսամայր, մեր հաշիւը
կըտեսնենք։ Կիմանաս թէ ինչ ասել է տիրոջը
խարել…

Աղուէսը շիմանալու դրեց, հառաչեց ու
արտասուալից ասաց.

—Ո՞հ, ես մեռնում եմ... Գայլերը քիչ
մնաց որ ինձ պատառ-պատառ անէին։ Ես ու-
զում էի նրանց ձեռքից եղջերուին խլել,
նրանք ինձ վրայ ընկան։ Հազիւ կենդանի ա-
զատուեցի։

— Իսկ դու չե՞ս խարում, բարկացած հարցրեց Այծամարդը:

—Միթէ ես կը համարձակուեմ քեզ խաբել, տէր
իմ: Ես այնքան վագեցի, որ կաշուիցս ըիչ մը-
նաց դուրս գայի... Ամեն կերպ աշխատում էի
քեզ գոհացնել, այն ինչ դու ինձ ես ուղում
պատառ-պատառ անել:

Այծամարդը մտածութեան մէջ ընկաւ, բուրեղ ծոծրակն ու ասաց.

—Կարելի է ճշմարիտ է ասածդ, սանամայր,
բայց այնուամենայնիւ չեմ հաւատում: Տես
միւս անգամ չըռնուես...



յս գէպը ինձ մտածելու ստի-
պեց։ Առաջ ամեն բան այնպէս
պարզ էր. ես բոլոր կենդանինե-
րին բարիի ու չարի էի բաժանում։
Բարիները նրանք էին, որոնք
մեզ լուսատաիկներիս չէին նեղացնում, իսկ
չարերը—որոնք մեզ ուստում էին։ Դրանից
պարզ ինչ կարող է լինել։ Բայց այս գէպ-
քում մի ուրիշ բան էր գուրս գալիս և ես
չէի կարող առաջուայ նման կենդանիներին
բաժանել։ Դուրս էր գալիս, որ չարերը

Երբեմն բարի էին երևում, իսկ բարիները — չար։
Յետոյ սիայն հասկացայ, որ ամեն կենդանի
կարող է լինել և բարի և չար հանգամանք-
ներին նայելով։

Այն, աշխարհում ապրելով և ամեն բան
դիտելով ակամայ խելօքանում ես, թէս այն-
պիսի լուսատափկներ գիտեմ, որոնք ոչ մի բա-
նի մասին չեն ուզում մտածել Երևի նրանք
երբէք ձեանհաւի բերանը չեն ընկել...»

— Այն, դժուար է աշխարհում ապրելը,
գանգատուեց իմ ընկերուհին, իմ սքանչելի
լուսատափկը, խորամանկ աղուէսի խօսքերը
կրկնելով։ Նա, ինչպէս ես նկատեցի, սիրում էր
ուրիշի խօսքերը կրկնել։



ՎԵՑԵՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Ա.



յոքան ժամանակ՝ ապրելով,
ես կարծում էի թէ ամեն
փորձանք զլխովս անցաւ և
նոր վտանգներ անհնար է
մտածել։ Մինչև անգամ ցա-
ւալի է, երբ մտածում ես, որ մեր լուսատը-
տիկներիս ուրախութիւններն այնքան չնչին ու
մանը են, իսկ նեղութիւններն ու վտանգները
այնպէս մեծ։ Մինչև անգամ իմ ընկերուհին,
իմ թանգագին լուսատափկն էլ տրտնջաց։

Կեանըի անախորժութիւնը նրա մէջն է,
որ չափաղանց վտանգներ կան... Եթէ ես աշ-
խարիը շինէի, շատ բան ուրիշ կերպ կըփոխէի։
Այն... ես կոչնչացնէի այն ամենը, որ մեզ լու-
սատափկներիս վնասում է։

— Բայց ամենից առաջ իհարկէ ձեանհա-
ւերին, կատակ արի ես։

—Ո՞հ, ես մինչև անգամ չեմ կարողանում այդ հրէշի անունն արտասանել... Բայց միթէ քիչ ուրիշ անդուրեկան կենդանիներ կան—գորտերն, մըջիւնները, պղոճները. ինչու համար նրանք գոյութիւն ունին: Զէ որ եթէ քննենք, աշխարհը շինուած է ու գոյութիւն ունի միայն մեզ լուսատափիկներիս համար, ուրեմն պէտք է թողնել միայն այն, ինչ որ մեզ օգուտ է բերում կամ հաճոյք պատճառում: Չեմ կարծում, որ հարկաւոր լինի այս պարզ ճշմարտութիւնն ապացուցանել:

—Իսկ ես կասկածում եմ, որ միւս կենդանիներն էլ նոյնն են մտածում, ինչ որ դու այժմ ասացիր: Մըջիւնների մասին ես հաւատացած եմ, որ նրանք հաստատապէս բոլորը իրանցն են համարում և աշխատում են ամեն բանի աիրանալ: Եթէ նրանց կամքին թողնէին, ամբողջ աշխարհը մի մըջնոց կըշինէին ու իրանք մէջը կապրէին:

Նա մտածման մէջ ընկաւ, մինչև անգամ հառաջեց: Յետոյ մի բան միտն ընկաւ և ուրախուրախ ասաց.

—Գիտես ինչ կայ: Ես երբ դեռ բոլորովին փոքրիկ լուսատափիկ էի, մի շատ պառաւ լուսատափիկ, որ ծերութիւնից արդէն մեռնում էր, մի բան ասաց: Նրան կարելի է հաւատալ, որովհետեւ նա պէտք չունէր ինձ խաբելու: Այն, նա ասաց ինձ. «Դու շուտ-շուտ երկնքին նա-

յիր, երբ երեկոյեան ամեն կողմից նրա վրայ են սպառում լուսատափիկները: Նրանք մեր լուսատափիկներն են, որոնք մեզ պէս գիշերներն են ապրում, իսկ ցերեկը քնում են և ոչոք չէ կարող նրանց տեսնել: Դու յաճախ մտածիր այս բանի մասին»:

—Ինարկէ... ասացի ես ակամայ յուղուած:

—Զէ որ ոչ մըջիւններն են երկինք բարձրանում, ոչ ճիճուններն ու ձեանհաւերը, այլ միայն լուսատափիկները: Պապիկ—լուսատափիկն արդարացի է...

—Իսկ նա չասաց քեզ, թէ նրանք երկնքում ինչ են ուտում: Զէ որ այնտեղ ոչ խոտ կայ, ոչ ծաղիկ և ոչ մի բան...

—Նրանք միայն այն ջրով են սննդում, որ ամեն օր ամպերը բերում են:

Ես կարծում եմ, որ այս մի բոլորովին դատարկ խօսակցութիւն էր, և մեր լուսատափիկային հպարտութիւնը մեզ շատ թանգնատեց:

—Նայիր, նայիր... հազիւ թէ ընկերուհիս կարողացաւ ականջիս շշնջալ, որ ինքը շուռ եկաւ մէջքի վրայ ու մեռած ձեացաւ:

Իսկ նայելու յիրաւի բան կար... Երեակացիցէր՝ երբ ես շուռ եկայ, մի չտեսնուած հրէշ տեսայ, որ չար աշքերը չուել էր վրաս: Այդ օճն էր... այն, իսկական ու օճը: Նա սարսափելի կերպով հանել էր իւր երկճեղ լեզուն ու դանդաղ դէպի մեզ սողում: Անից բար դարձայ և

չկարողացայ մի ոտս անգամ շարժել, իսկ օձը
զլուխը վեր ու վեր բարձրացրեց, բաց արաւ
ահագին կարմրագոյն բերանը և...

—Թոյլ տուր հարցնել, դու ի՞նչ ես մէջ
ընկնում. խոտերի միջից մի ձայն բարձրացաւ,
երբ օձն ուզում էր ինձ բռնել։ Դրանք իմ
լուսատիկներն են... թէև նրանք այնքան էլ
համեղ չեն, բայց մի ամբողջ ժամ է, որ նրանց
աշք եմ ածում և դեռ չէի որոշել, թէ այդ եր-
կուսից որին առաջ ուտեմ։

Այս ասողը մի զզուելի հաստ գորտ էր,
որ կասես միմիայն մի ահագին փորից էր կազ-
մուած։ Օձը նրա վրայ նայեց ու քաղաքավա-
րութեամբ պատասխանեց։

—Մենք կարող ենք նրանց բաժանել:

— Շնորհակալ եմ... դու ինձ թողնում ես
մեռած լուսատոիկին, որն արդէն չորացել է
և կարող է որկորումս մնալ ու խեղդել ինձ:

Նրանք երկար վիճեցին. Օձը ֆշացնում
էր, իսկ գորտն այնպէս բարձր կռկում, կա-
սես հաստ մահակով մէկը նրա փորին խփում
լինէր:



Ծուար է ասել թէ այս տարօրինակ վէճը ինչով կը վերջանար, երբ յանկարծ աւելի սարսափելի բան պատահեց: Ինձ թւում է, որ մեր ամբողջ կեաքը միմիայն ահ ու սարսափից է կազմուած... Երևակաւեսէք մի աւահսի

պատկեր. մինչդեռ օճն ու գորտը վիճում էին,
ես սողացի իմ ընկերուհու մօտ և հէնց որ ու-
զում էի մեռած ձևացնեմ ինձ, յանկարծ վե-
րեկից շուզով մի ահազին բան թուաւ ներքեւ և
երկուսիս մէջտեղը ցցուեց:

Սարսափելի հարուածից ես ու իմ ընկերուհին մի կողմ ընկանք, որովհետև հարուածը ուղիղ երկուսիս արանքումն էր:

— Թի՛րւ, թի՛րւ... մի ծայն փնթփնթաց. արժէ այսպիսի անպէտք բան ուտել. Ուզեցի երկու ճիճուներին միանգամից կտցել, միայն կտուցս գետնի մէջ խրուեց... բահ, ահա թէ որտեղ են իմ անուշիկ բարեկամները... Օձը փորձեց խոտերի մէջ թագ կենալ, բայց սարսափելի կտուցն ահազին մկրատի պէս բռնեց նրան ունա սկսեց գալարուել ու ֆշալ. Մի ուրիշ ոչ պակաս սարսափելի կտուց էլ գորտի փորի մէջտեղից բռնեց ևնա կասես օդը բարձրացաւ և յետոյ ես տեսայ նրա յետին թաթերը. միայն, երբ կուլ էր գնում ամբողջովին բաց կտուցի մէջ գլորուելով:

— Ո՛չինչ, համեղ է... ասաց գորտ ուտող կտուցը. Լաւ հաստիկ ու պարարտ գորտ է:

Օձի կուլ տալը շատ էլ հեշտ չէր. Նա երկար ժամանակ ոլորւում էր, ֆշացնում ու զուր աշխատում անողորս թշնամուն թունաւորել. Բայց հրէշներն օգնեցին իրար. մէկը բռնեց օձի գլուխը, միւսը պոչը և օձը միջից կիսեցին: Ես այժմ միայն նայեցի այդ արարածների վրայ, որ երկար ոտներ, երկար վիզ և սարսափելի կտուցներ ունեին, իրանք էլ մարդու բարձրութեամբ. Նրանց փետուրներին նայելով կարելի էր ենթադրել, որ նըանք թռչուններ էին:

— Դրանք կոռւնկներ են, բացատրեց ինձ իմ ընկերուհին:

Սաստիկ վախից յետոյ, նա այնքան ուշըի էր եկել, որ սողաց խոտերի մէջ ինձ որոնելու. — Կոռւնկներ, ուրախացայ ես. Ուրեմն դըրանք մեր ամենալաւ բարեկամներն են...

— Դու լսե՞լ ես թէ առաւօտեան արշալուսին դըրանք ինչպէս են կուռլը-կուռլը կանչում...

— Ասենք մեր բարեկամները շատ խղճալի ձայն ունին: Մինչև անգամ ես խղճում եմ նրանց: Կասես մի բան կորցրած լինին...

— Այդ մեզ չէ վերաբերում. Թող կանչեն ինչպէս իրանց հաճելի է, բայց որ նրանք մեր թշնամիներին կոտորում են այդ մեզ է վերաբերում: Ինչքսն գորտեր, օձեր ու զանազան արարածներ պէտք է ուտեն, որ մեր այդ երկու բարեկամները կշտանան... Եթէ դըրանք չըլինէին, մենք չէինք կարող ապրել.

— Ներողութիւն, բայց և այնպէս ահա այս բարեկամը ըիչ առաջ ուզում էր մեզ ուտել և հայհոյեց անպիտան ճիճուներ ասելով... Լաւ բարեկամներ են...

— Ո՛չ, նրանք կատակ են արել...

— Լաւ կատակ է, ինչ ասել կուզէ:

— Կոռւնկները փայլուն բաներ են սիրում, այդ նրանց թուլութիւնն է: Նրանք կուլ են տալիս ամեն փայլուն բան...

— Շատ շնորհակալ եմ... դըրանից ինձ ինչ թեթևութիւն: Շատ պէտքս է թէ նրանք սի-


րում են... Այնուամենայնիւ այդպիսի բարեկամներից հեռու մնալն աւելի ապահովութիւն է:

— Այս, բարեկամները զանազան են լինում, ինձ հետ համաձայնեց իմ ընկերուհին:

Կոռունկները անկասկած մարդ ու կին էին: Մարդը, թւում էր թէ, հոգում էր նրա մասին և չափազանց քաղաքավարութեամբ նրան թողեց օձի գլուխը, բայց կինը մի երկու անգամ կտցահարեց և դժգոհութեամբ ասաց.

— Շատ շնորհակալ եմ... այս անպէտք բանը դու կեր: Փափուկ մասը կերել ես ու գլուխը ինձ համեցէք անում:

Մարդը, ինչպէս երեսում էր, չուզեց վիճել և այնպէս ցոյց տուեց իրան, երբ չէ լսում: Այս բանը ես շատ հաւանեցի և վճռեցի ինքս էլ նոյնպէս վարուեմ, որ ընտանեկան անախորժութիւններ չկնին: Միայն ես չեմ կարողանում մի ոտի վրայ կանգնել, ինչպէս այդ անում էր կոռունկ-մարդը, երբ կոռունկ-կինը գրլուխը թեփ տակ դրած ննջում էր: Երեփ նախաճաշին շատ գորտեր էր կերել և ուզում էր հանգստանալ, իսկ նա իրրև պահապան էր կանգնած կնոջը և վիզը ձգած, աչքերը բաց նայում էր շուրջը:



Frosster.



—Մենք ամենագեղեցիկ թռչուններն ենք։
Մեզանից գեղեցիկ թռչուն չկայ։ Ամենքը մեզանով հրճւում են...

Մինչև անգամ լսել զզւում էի: Երբեմն
սողում էի մինչև ափո և կանչում.

—Բարեվ, պարոն կարապ:

Նա երբէք իսկոյն չէր պատասխանում, այլ սկզբում ծռում էր վիզը, թևերը թափ տալիս ու յետոյ ասում.

— Այդ դժւ ես, լուսատտիկ: Դէ, ասա ի՞նչ-պէս ես ապրում:

— Ոչինչ... Միայն ոչ լողալ գիտեմ, ոչ էլ թոշել:

— Առանց դրանց էլ լաւ ես... Հապա տես քանի ոտներ ունիս և դեռ գիշերներն էլ լոյս ես տալիս:

Կարապ-կինն ինձնախանձում էր. «Ախեթէ կարապները կարողանային լոյս տաք ինչպէս այդ ճիճուները... այն ժամանակ էլ ուրիշ բան չէի խնդրի»: Առենից ծիծաղելին էր երբ կարապները ափն էին դուրս գալիս ու սկսում էին ծուռ ու սե ոտներով ման գալ: Ահա ձեզ գեղեցկութիւն. քանի որ լողում է ջրում, գեղեցիկ է, դուրս է գալիս ափը—բանի պէտք չէ: Ինչպէս ինքն է այլանդակ այնպէս էլ իւր քայլերը:

Բագն աւելի ևս ծիծաղելի շարժուածք ունի: Նա առհասարակ վատ է ման գալիս և բացի այդ՝ ամեն անպէտք բան ուտում է, այնպէս որ լիբ բարձիկը անդադար կախ է ընկնում, որից նա բոլորովին հարթ տեղերում անգամ վայր է ընկնում: Առհասարակ նա սաստիկ շատակեր է. նա թէ հոտած ձուկ է ուտում, թէ որդեր, թէ գորտերի ձուաներ և մին-

չև անգամ գետի տիղմը: Բայց և այնպէս իաւ-ղաղանէր բնաւորութիւն ունի:

— Ես չեմ հասկանում ինչպէս կարելի է այդպէս ապրել, զարմանում էի ես: Չեր կեանքըն ամբողջապէս ուտելու մէջ է անցնում...

— Ես ինչ անեմ, որ այդպիսի ստամոքս ունիմ. միամիտ կերպով արդարացնում էր իւրան բաղը: Ստամոքսս իմ թշնամին է. ինչքան որ ուտեմ, դարձեալ ուզում եմ ուտել. իսկ երբ կշտանում եմ—ուզում եմ քնել: Այսպէս չես էլ իմանում թէ ամառն ինչպէս եկաւ ու գնաց: Յետոյ պէտք է ձևեռը տաք կողմ թոշել. այդ ժամանակ ահա ճանապարհին լաւ քաղցածանում ես:

Բոլոր այդ ծանօթութիւնները, խօսակցութիւններն ու անձնական փորձը ինձ այն ստքի բերին, որ թէկ աշխարհը ստեղծուած է լուսատտիկներիս համար, որի մասին իհարկէ ոչ մի կասկած չկայ, բայց իրանք լուսատտիկները, ինչպէս ինձ թւում է, կարող էին ուրիշ կերպ կազմակերպուել: Եթէ նրանց բարձր հասակ տային, եղջերուի ոտներ, գայլի հոտառութիւն, կարապի թևեր, աղուէսի խորամանկութիւն, մրջիւնի աշխատասիրութիւն, արծուի սրատեսութիւն և արջի ոյժ,— այս, եթէ այս ամենը միացնենք, այն ժամանակ մի սքանչելի լուսատտիկ դուրս կըդար և ոչոքից ու ոչ մի բանից չէր վախենայ: Շատ հեշտ է քաջ լինել.

Երբ կայ ոյժ, ճարպիկութիւն, խորամանկութիւն
ու արագ ոտներ: Հէնց որ մի բան պատահեց,
փախիր: Ինչքան երկար ես աշխարհում ապրում,
այնքան աւելի ես համոզւում, որ կատարելու-
թիւն աւաղ գոյութիւն չունի:


Երբ այս ամենը իմ ընկերուհի լուսատափ-
կին պատմեցի, նա սկսեց վիճաբանել:

—Բոլոր կատարելութիւնները օգտի չեն
ծառայում: Այն, մանաւանդ վտանգաւոր է գե-
ղեցկութիւնը: Այդ մասին ինչպեմ ինձ հետ մի
վիճիր:

—Ես չեմ էլ մտածում վիճելու... բայց այ-
նուամենայնիւ ես քեզ լաւ չեմ հասկանում...
Ո՞ւմ կարող է գեղեցկութիւնն արգելը լինել:

—Շատ շատերին... Եղջերուն համեղ միս ու-
նի—նրան սպանում են, որ միսը ուտեն. ճա-
գարը գեղեցիկ բուրդ ունի—նրան սպանում են,
որ մորթուց օգտուեն. թռչուններին կոտրում
են համեղ մսի ու բմբուլների համար, իսկ գե-
ղեցիկ միջատներ, ծաղիկներ ու բարեր հա-
ւաքում են զարդի համար:

Նա մասամբ ճշմարիտ էր և ես միւս կող-
մից յիշելով կռունկին, որ իր ընկերուհու հետ
չվիճեց, լոեցի: Միմիայն իմաստութիւնն է, որ
միշտ և ամենքին օգուտ է բերում...



ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐ

Ա



յո, շատ անցքեր անցան մեր
գլխով. դժուար է մինչև անզամ
այդ ամենը մի առ մի մտաքերել:
ինձ թւում է, որ մինչև անզամ
սկսել եմ միքանի բաներ շփոթել,
կարելի է որ միքանի տեղ էլ աւելորդաբա-
նութիւն եմ արել: Այնուամենայնիւ ուզում
եմ մինչև վերջը ասել:

Հասաւ եօթներորդ գիշերը: Յանկարծ մի
տիրութիւն եկաւ վրաս: Այն, աշխարհում ես
ամեն բան տեսայ, ամեն ինչ փորձեցի և ամեն
բանի համա առայ ու ինձ ոչինչ չէր հետաքր-
քրում: Սողում ես դէպի խոտը—ծանօթ է քեզ
խոտը, փորձել ես նրան. տեսնում ես մըջիւ-
նին—մըջիւնն էլ ծանօթ է, բանի-քանի անզամ
եմ նրա ձեռից փախել ու թագկացել: Սունկն

Էլ—հին ծանօթ է. գորտը—նոյնպէս, ձեանհաւը նոյնպէս, արջը, պղոճը, կարապը, ամեն մի մժեղ—նոյնպէս. Մի խօսքով ձանձրալի է, հետաքրքրական բան չկայ: Այս, հասաւ եօթներորդ գիշերը և յանկարծ իմ մէջ այս միտքը յղացաւ—որ ես ամենքից խելօք եմ: Միւս լուսատիկները դեռ նոր են սկսում ապրել, իսկ ես աշխարհիս ամեն բանը լաւ գիտեմ: Յանկարծ մի ուրախութիւն է պատում ինձ, ոչ թէ ուրախութիւն, այլ հպարտութիւն: Պառկում եմ ու հպարտանում ինքս ինձ:

—Քեզ ի՞նչ է պատահել, զարմացած հարցնում է իմ ընկերուհին: Հիւանդ չինե՞ս,

—Սխալւում ես...

Ես հպարտութեամբ լոռում եմ: Երկի նա չփառէր թէ ում հետ գործ ունի, բայց ինձ թը լում է, որ նա կարող էր մի բան նկատել:

Ես մինչև կէս գիշեր հպարտացայ, այն ինչ միւս յիմար լուսատիկները ամենայիմար կերպով սողում էին այս ու այն կողմ ու աւելի յիմար կերպով ամեն մի անպէտք բան ուտում: Նրանք ինձ մօտ էլ եկան. նայում են ու հարցնում.

—Դու ինչու ես պառկել, արի խաղանք: Ես այնպէս ձևացայ, իբր թէ նրանց յիմար խօսքերը ոչ լսում եմ և ոչ հասկանում: Աստուած սիրէք, ես պէտք է նրանց հետ խաղամ... Ինձ աւելի այն էր վշտացնում, որ նր-

րանը յամառ կերպով չէին ուզում հասկանալ, թէ ում հետ են խօսում և ես աւելի հպարտացայ: Զեմ ասի, որ այս բանը շատ էլ հաճելի կամ հեշտ բան է: Բայց ինչ արած՝ պէտք է համբերել:

Իմ սիրելի լուսատաիկը սաստիկ անհանգիստ եղաւ ու իբր պատահմամբ մի շատ ծերուկ լուսատիկ բերեց, որը հազիւ էր շարժւում:

—Ապա լեզուդ ցոյց տուր. ասաց այդ անամօթը: Ո՛չինչ լեզուն կարգին է... ապա տուր քո թաթը:

Նա իմ ոտը բռնեց, մի ինչ-որ բան համարեց ու կրկին ոչինչ չգտաւ: Նա ծերութիւնից յիմարացել էր ու բոլորովին նկատեց, որ ես ամենախելօք լուսատիկ եմ, իսկ ես այդ մասին ոչինչ չասացի: Ճիշտն ասած՝ ես սկսեցի կարգին բարկանալ... Գթացէք, ամենքը կասես խօսք են տուել ու ոչինչ չեն ուզում նկատել, բայց բանը կարծեմ ամառուայ լուսնեակ գիշերուայ պէս պարզ է:

Անցաւ և կէս գիշերը, իսկ ես շարունակ հպարտանում էի:

Արդեօք փորձել էք գիշերը աստղալից երկինքը գիտել: Այդ շատ հետաքրքրական է: Ամբողջ երկնքի երեսին կասես լուսատիկներ լինին փոռուած և նրանք ամենքը շարժւում են մեզ հասարակ լուսատիկներիս նման, միայն

այն գանազանութեամբ, որ նրանց շարժողութիւնը աւելի դանդաղ է։ Ես գլխի ընկայ, որ այս առաջ է գալիս նրանց վսեմութիւնից։ Երևի նրանք էլ հիւանդանում էին ուչէին ցանկանում յիմարաբար վազվելով սողալ։ Խելօք լուսատիկն ի՞նչ ունի շտապելու։ Թող ուրիշ ները իրար անցնեն, հոգս անեն ինչքան ուզում են։ Ես մինչև անգամ փորձեցի նրանց հետ խօսել, բայց նրանք այնպէս ձևացան, իբր թէ ոչինչ չեն լսում։ Այս բանը իմ պատուին դիպաւ։

—Ես էլ ձեզ չեմ ուղում ճանաչած լինել,
բղաւեցի ես. Ես էլ գետնին կընայեմ—դէ,
կերպ...

Այս անգամ էլ նրանք այնպէս ցոյց տուին, որ ոչինչ չեն լսում: Բայց ինչ որ կար սրտումս բոլորը նրանց ասացի ու իմ մէջ մի ուրիշ միտք յղացաւ. եթէ ես ուզում եմ ծանօթանալ, թող ծանօթանամ զլխաւոր լուսատաիկի հետ, որ ցերեկն անգամ լոյս է տալիս և որին յիմար մարդիկ արեգակի տեղ են ընդունում: Երբ ես հիւանդ պառկած էի և ամբողջ օրը չէի քնել, ես այդ լուսատաիկին մի քիչ տեսայ, բայց նրա հետ ծանօթանալու հիվ սիրտ ուներ:



մ յանդուզն մտագրութեան հա-
մար իհարկէ ես ոչինչ չասացի
իմ սիրելի ընկերոջը. մինչև ան-
գամ երբ առաւօտ եղաւ և ար-
շալոյսը բացուեց, ինձ իբրև քնած
ձևացրի, որ չիմանայ:

Արևն ամպերի միջից բարձրանում էր մեծ ու կարմիր և առանց ճառագայթների, կասես դեռ չէր կարողացել քնից լաւ զարթնել։ Ամեն ինչ, որ գիշերը ապրում էր, իսկոյն թագկացաւ և ծիծաղելի էր տեսնել, թէ որդերն ինչպէս էին հողի տակ թաղւում, մկները իրանց բներում ծածկւում, բուերը իրանց փչակներում քնով անցնում և առհասարակ բոլոր կեանքը կասես մեռնում էր։ Իմ ըունը սաստիկ տանում էր, բայց ես ինձ պահում էի և աշխատում չընել։ Ես սպասում էի, մինչեւ որ արել բոլորովին կըզարթնի։

Պէտք է ասել, որ ցերեկը իմ շուրջը բոլորովին ուրիշ կերպարանք ստացաւ և ես չէի կա-

ըովանում իմ հարազատ տեղերը ճանաչել: Խո-
տը աւելի կանաչ գոյն էր առել, երկնքի մուգ
կապոյտ գոյնը—բաց գոյն, մառախուղը կտաւի
պէս փռփռալով բարձրացաւ դէպի վեր, իսկ ան-
տառում ու թփերի մէջ մի մեծ աղմուկ, իրա-
րանցում ընկաւ: Այդ ցերեկուայ թոշուններն
էին, որ զարթնել սկսել էին գժերի պէս ճւճը-
ւալ, ծւծւալ ու շւշւալ: Դրանից զզուելի բան
դեռ լսած չկայի, Դեռ մի կողմից էլ քամին
բարձրացաւ, ծառերը սկսեցին խշխալ կասես
թէ զանգատում լինէին:

Արել հետզետէ աւելի էր բարձրանում:
Յօղը, որ աղամանդի անձրեսի պէս ծածկել էր
խոտերը, չորացաւ: Ծաղիկներից մի արբեցու-
ցիչ բուրմունք բարձրացաւ, մինչև անզամ փշա-
տերկ ծառերն ու հասարակ խոտը իրանց հո-
տով լցրին օդը: Երբ բոլորովին տաքացաւ, մին-
չև անզամ յիմար թոշունները ծածկուեցին ան-
տառի խորքերում ու դադարեցին երգելուց: Հա-
սաւ ծանօթանալու ամենալաւ ժամանակը և
ես սողացի մերձակայ թմբի վրայ, որտեղից ա-
ւելի յարմար էր խօսել:

— էյ, Լուսատտիկ-եղբայր, բարով բեզ,
ես այնպէս բարձր կանչեցի, որ ինքս էլ մի քիչ
վախեցայ:

Պատասխան չկար: Արեգակն էլ աստղերի
պէս ձևացրեց, որ ոչինչ չէ լսում ու չի հաս-
կանում: Նա բոլորովին կոլոր ձև ունէր ու հա-

զարդուսաւոր ուսներ, որ փռփռում էին չորս
կողմը—մարդիկ դրանց ճառագայթ անունն են
տալիս:

— էյ, եղբայր, ի՞նչ ես լոռում. երկրորդ ան-
գամ կանչեցի ես: Դեռ աղգակից էլ ես... Ա՛խ,
ինչպէս վատ է այդ արարքը:

Պատասխան չկար:

— Եղբայր, զու կամ յիմար ես, կամ խօսել
չես իմանում, երբորդ անգամ բղաւեցի: Այդ
մինչև անգամ անբաղաքավար է... հասկանում
ես:

Կրկին ամենատխուր լռութիւն: Այդ արդէն
բոլորովին անբաղաքավար էր և ես սկսեցի
ամենավատ լուսատտիկի պէս հայհոյել նրան:
Չեմ կարծում, որ այդ միջոցին ես զեղեցիկ
գէմք ունենայի, բայց ինչ արած՝ երբ սիրոս
այնպէս նեղացած էր, ես չկարողացայ ինձ
զսպել:

— Դու հէնց մի վատ լուսատտիկ ես: Այն...
Քո պատկերն էլ ամենայիմարն է... Եւ այդ
նրանից է, որ զու գիշերները ընում ես. բո-
լորովին չգիտես թէ աշխարհում ինչ է կա-
տարւում: Քո լոյսն էլ ամենայիմար լոյսն է...

Պէտք է որ ես տաքացած ժամանակս շատ
յիմարութիւններ խօսած լինէի, որովհետեւ մի
արծաթահնչիւն ծիծաղ լսուեց: Այդ ծիծաղը
անտառի զանգակիկին էր, զեղնածաղիկնե-

ըին, արծաթագոյն շուշաններին, խաւոտ առիւծատամներին...

—Տեսէք, տեսէք, ինչ չար լուսատիկ է.
կը կնեցին բոլոր ծաղիկները:


—Նա տիսմար է, բոլորովին տիսմար...

-- ԱՌԱ ԻՆՉՔԱՆ ԱԲՄԱՐ Է...

Կարող էք երևակայել, թէ որքան բարկացայ: Ես միանգամից յարձակուեցի ամենըի վրայ ու սկսեցի առաջին հանդիպած գեղնածաղիկը կրծել: Իսկ նա իւր գեղին գլուխը շարժում ու միայն ծիծաղում էր.

— Земля, земля...

Այս բանի վրայ ուշըից գնացի և խոտերի
մէջ պառկած մնացի մինչև երեկոյ, երբ Այծա-
մարդը գալով բռնեց ինձ ինչպէս և շատ շա-
տերին ու բերեց շպրտեց լճի մէջ, որ յաւեր-
ժահարսներին վախեցնէ։ Յուրա ջուրը ինձ վրայ
թարմ ազդեցութիւն արաւ և ես յանկարծ ուշ-
քի եկայ ու տեսայ, որ Զրամանուկը ինձ բռնել
էր, ինձանով խաղում ու զուարձանում էր։



Արեն ամպերի միջից բարձ-
րանում էր մեծ ու կարմիր և առանց ճառա-
գայթների, կասես դեռ չէր կարողացել քնից լաւ
զարթնել։ Ամեն ինչ, որ գիշերը ապրում էր,
իսկոյն թագկացաւ և ծիծաղելի էր տեսնել,
թէ որդերն ինչպէս էին հողի տակ թաղւում,
մկները իրանց բներում ծածկւում, բուերը ի-
րանց փշակներում քնով անցնում և առհասա-
րակ բոլոր կեանքը կասես մեռնում էր։ Իմ
ըունը սաստիկ տանում էր, բայց ես ինձ պա-
հում էի և աշխատում չընել։ Ես սպասում էի,
մինչև որ արևը բոլորովին կըդարթնի։

Պէտք է ասել, որ ցերեկը իմ շուրջը բոլորովին ուրիշ կերպարանք ստացաւ և ես չեի կա-

ըողանում իմ հարազատ տեղերը ճանաչել: Խո-
տը աւելի կանաչ գոյն էր առել, երկնքի մուգ
կապոյտ գոյնը—բաց գոյն, մառախուղը կտաւի
պէս փռփռալով բարձրացաւ դէպի վեր, իսկ ան-
տառում ու թփերի մէջ մի մեծ աղմուկը իրա-
րանցում ընկաւ: Այդ ցերեկուայ թռչուններն
էին, որ զարթնել սկսել էին գժերի պէս ձւճը-
ւալ, ծւծւալ ու շւշւալ: Դրանից զզուելի բան
գեռ լսած չկայի: Դեռ մի կողմից էլ քամին
բարձրացաւ, ծառերը սկսեցին խշխշալ կասես
թէ գանգատում լինէին:

Արել հետզհետէ աւելի էր բարձրանում:
Ճօղը, որ աղամանդի անձրեի պէս ծածկել էր
խոտերը, չորացաւ: Ծաղիկներից մի արբեցու-
ցիչ բուրմունք բարձրացաւ, մինչև անգամ փշա-
տերկ ծառերն ու հասարակ խոտը իրանց հո-
տով լցրին օղը: Երբ բոլորովին տաքացաւ, մին-
չև սնգամ յիմար թռչունները ծածկուեցին ան-
տառի խորքերում ու դադարեցին երգելուց: Հա-
սաւ ծանօթանալու ամենալաւ ժամանակը և
ես սողացի մերձակայ թմբի վրայ, որտեղից ա-
ւելի յարմար էր խօսել:

— Էյ, Լուսատտիկ-եղբայր, բարով քեզ,
ես այնպէս բարձր կանչեցի, որ ինքս էլ մի քիչ
վախեցայ:

Պատասխան չկար: Արեգակն էլ աստղերի
պէս ձեացընք, որ ոչինչ չէ լսում ու չի հաս-
կանում: Նա բոլորովին կոլոր ձև ունէր ու հա-

զար լուսաւոր ուսներ, որ փռւում էին չորս
կողմը—մարդիկ դրանց ճառագայթ անունն են
տալիս:

— Էյ, եղբայր, ի՞նչ ես լոռում: Երկրորդ ան-
գամ կանչեցի ես: Դեռ ազգակից էլ ես... Այս,
ինչպէս վատ է այդ արարքը:

Պատասխան չկար:

— Եղբայր, դու կամ յիմար ես, կամ խօսել
չես իմանում, երբորդ անգամ բղաւեցի: Այդ
մինչև անգամ անքաղաքավար է... հասկանում
ես:

Կրկին ամենատխուր լոռութիւն: Այդ արդէն
բոլորովին անքաղաքավար էր և ես սկսեցի
ամենավատ լուսատտիկի պէս հայնոյել նրան: Զեմ
կարծում, որ այդ միջոցին ես գեղեցիկ
գէմք ունենայի, բայց ինչ արած՝ երբ սիրտս
այնպէս նեղացած էր, ես չկարողացայ ինձ
զսպել:

— Դու հէնց մի վատ լուսատտիկ ես: Այս...
Քո պատկերն էլ ամենայիմարն է... Եւ այդ
նրանից է, որ դու զիշերները ընում ես. բո-
լորովին չգիտես թէ աշխարհում ինչ է կա-
տարւում: Քո լոյսն էլ ամենայիմար լոյսն է...

Պէտք է որ ես տաքացած ժամանակս շատ
յիմարութիւններ խօսած լինէի, որովհետեւ մի
արծաթահնչիւն ծիծաղ լսուեց: Այդ ծիծաղը
անտառի զանգակիկին էր, դեղնածաղիկնե-

ըին, արծաթագոյն շուշաններին, խաւոտ առիւ-
ծատամներին...

— Տեսէք, տեսէք, ինչ չար լուսատիկաէ.

կրկնեցին բոլոր ծաղիկները:

— Նա տխմար է, բոլորովին տխմար...


— Ա՛խ ինչքան յիմար է...

Կարող էք երևակայել, թէ որքան բարկա-
ցայ: Ես միանգամից յարձակուեցի ամենքի
վրայ ու սկսեցի առաջին հանդիպած զեղնա-
ծաղիկը կրծել: Իսկ նա իւր զեղին գլուխը շար-
ժում ու միայն ծիծաղում էր.

— Յիմար, յիմար...

Այս բանի վրայ ուշըից գնացի և խոտերի
մէջ պառկած մնացի մինչև երեկոյ, երբ Այծա-
մարդը գալով բռնեց ինձ ինչպէս և շատ շա-
տերին ու բերեց շպրտեց լճի մէջ, որ յաւեր-
ժահարսներին վախեցնէ: Ցուրտ ջուրը ինձ վրայ
թարմ ազդեցութիւն արաւ և ես յանկարծ ուշ-
ըի եկայ ու տեսայ, որ Զրամանուկը ինձ բռնել
էր, ինձանով խաղում ու զուարճանում էր:





Այստեղ լուսատաիկի պատմութիւնը վեր-
ջացաւ. Կայօրանջեց ու յոզնած ձայնով ասաց.

— Ահա ես այստեղ ձեզ հետ խօսքի եմ բըռ-
նուել և բոլորովին մոռացել եմ սիրելի լու-
սատոիկին... Այս որբան ապերախտ եմ: Պէտք
է իսկոյն որոնեմ նրան: Զրամանուկ, դու ինձ
բաց կըթողնես, չէ...

Փոքրիկ յաւելժահարսը կանաչազարդ գլու-
խը ալեսոր Զրապապի ուսին կոթնած՝ բաղցը
ննջում էր:

—Նրան մի զարթեցնի... ցած ձայնով ա-
սաց ծերունին. Գնա քո ճանապարհը. Շուտով
առաւօտ կը լինի:

Յաւերժակարս-Ջրամանուկը բոլորովին քնածէր, երբ Ջրապապը ձեռքերի վրայ տանելով զգուշութեամբ տարաւ եղեգնուար. Ծերունին ինքն էլ էր ցանկանում քնել Նրա ձերմակ մօռուսը թափանցիկ դարձաւ ու ինքն էլ գնալով գնալով օդի մէջ կասես հալուեց, նոսրացաւ.

— Բնել քնել քնել... որտեղից որտեղ Այծամարդի կուտոցի ձայնը բարձրացաւ. նա դուրս էր եկել իր իշխանութեան մէջ պտաելու. Ահա իսկոյն արկը դուրս կըգայ հօ-հօ, հօ-հօ...

Ճանապարհին նա պատահեց արջին, որ զաղառուկ գնում էր դէպի մեղուի փեթակը:

— Ի՞նչ ես այստեղ թափառում, բղաւեց նրա վրայ Այծամարդը և մի լաւ աքացի տուաւ մէջըին: Տուն կորիր, թափառական...

— Լաւ, գնում եմ, համաձայնեց արջը և մինչեւ անգամ բոր էլ չարեց: Դու կարծում ես շատ դուրեկան է, երբ մեղուները սկսում են խայթել:

— Գնա, գնա, քաղցրասէր... այդ քեզ սազ չէ զալիս: Հօ-հօ օ օ... բուեր, պասկուճներ, գնացէք ձեր տեղերը... Զդիկներ, դէպի ծառերի փշակը... անկարգութիւն չեմ կարողաանել:

Այծամարդն ապա դուրս եկաւ դէպի լճի կողմը և բղաւեց.

— Եյ, դուք բաղեր, դէպի շամբը, իսկոյն արկը դուրս կըգայ: Հօ-հօ օ օ...

Նա նստեց լճի ափին, իւր այծի ոտները կախեց ջրի մէջ ու մտածութեան մէջ ընկաւ:

Ահա ամենը Այծամարդին պախարակում են, բայց քանի քանի աշխատութիւններ կան: Ամեն ինչ պիտի նախատեսնէ, ամենըին տուն ըշէ, բոլորի մասին մտածէ:

— Քեռի, դու իմ լուսատիկին չես տեսել. խոտի միջից մի բարակ ձայն լսուեց:

Այծամարդը շուռ եկաւ ու նկատեց լուսատափիկին, որ խոտերի մէջ կանաչ կրակի պէս լոյս էր տալիս և որոնում իւր ընկերուհուն:

— Քո լուսատափիկին, մտածեց մի քիչ Այծամարդը: Այն, ինչպէս չէ, յիշում եմ... նա շատ ժամանակ չէ, որ սողաց դէպի տուն ու քո մասին էր հարցնում... դէ, քաշուիր գնա... Անտառում ձեր նմանները շատ կան, ամենըին չես կարող նայել...

— Շնորհակալ եմ քեռի...

Մառախուղը սկսեց հանդարտ բարձրանալ լճի վրայ ու երկնքում մէկը միւսի ետևից աստղերը հանգչել, կասես մի աներևոյթ ձեռք երկնքից նրանց պոկում լինէր. կկուն հեռուն կու-կռւ, կու-կռւ ձայներ էր հանում և այդ բանը Այծամարդի բարկութիւնը շարժեց: Այ քեզ բան, թռչուններն էլ փոխուել այլանդակուել են, գիշերներն էլ են կու-կու կանչում, ցերեկներն էլ:

— Դէ, ընելու ժամանակ է, եղբայր, վճռեց Այծամարդը, տեղից վեր կենալով: Ամենը ձեր տեղերը: Այ, լաւ: Հօ-հօ օ օ...

Եւ նա գնաց ու փոթորկից շուռ եկած մի եղենու տակ վայր ընկաւ ու մրափեց: Իսկ լուսատափիկը սողալով, սողալով տուն հասաւ ու գտաւ իւր ընկերուհուն, որ անհանգիստ նրան էր սպասում:



Այստեղ լուսատիկի պատմութիւնը վեր-
ջացաւ. նայօրանձեզ ու յոգնած ձախով ասաց.

—Ահա ես այստեղ ձեզ հետ խօսքի եմ բըռ-
նուել և բոլորովին մոռացել եմ սիրելի լու-
սատոփիկին... Այս որքան ապերախտ եմ: Պէտք
է իսկոյն որոնեմ նրան: Ջրամանուկ, դու ինձ
բաց կըթողնես, չէ...

Փոքրիկ յաւերժահարսը կանաչազարդ գլու-
խը ալկոր Զբապապի ուսին կռթնած՝ քաղցր
ննջում էր:

—Նրան մի զարթեցնի... ցած ձայնով ասաց ծերունին. Գնա բո ճանապարհը. Շուտով առաւօտ կը լինի:

Յաւերժահարս՝ Զրամանուկը բոլորովին քնածէր, երբ Զրապապը ձեռքերի վրայ առնելով՝ զգուշութեամբ տարաւ եղեգնուտը. Ծերոնին ինքն էլ էր ցանկանում քնել. Նրա ճեղմակ մօրուսը թափանցիկ դարձաւ ու ինքն էլ զնալով՝ զնալով օդի մէջ կասես հալուեց, նոսրացաւ.

— Քնել, քնել, քնել... որտեղից որտեղ Այծամարդի կուսոցի ձայնը բարձրացաւ. նա դուրս էր եկել իր իշխանութեան մէջ պատելու: Ահա իսկոյն արել դուրս կը գայ հօ-հօ, հօ-հօ...

Ճանապարհին նա պատահեց արջին, որ զաղում էր դէպի մեղուի փեթակը:

— Ի՞նչ ես այստեղ թափառում, բղաւեց նրա վրայ Այծամարդը և մի լաւ աքացի տուաւ մէջըին: Տուն կորիք, թափառական...

— Լաւ, զնում եմ, համաձայնեց արջը և մինչև անգամ բոր էլ չարեց: Դու կարծում ես շատ դժուեկան է, երբ մեղուները սկսում են խայթել:

— Գնա, զնա, քաղցրասէր... այդ քեզ ոսազ չէ գալիս: Հօ-հօ օ... բուեր, պասկուճները զնացէր ձեր տեղերը... Զղջիկներ, դէպի ծառերի փչակը... անկարգութիւն չեմ կարող տանել:

Այծամարդն ապա դուրս եկաւ դէպի կողմը և բղաւեց:

— Եյ, դուք բաղեր, դէպի շամբը, իսկոյն արել դուրս կը գայ: Հօ-հօ օ...

Նա նստեց լճի ափին, իւր այծի ոտները կախեց ջրի մէջ ու մտածութեան մէջ ընկաւ:

Ահա ամենը Այծամարդին պախարակում են, բայց բանի բանի աշխատութիւններ կան: Ամեն ինչ պիտի նախատեսնէ, ամենըին տուն բշէ, բոլորի մասին մտածէ:

— Քեռի, դու իմ լուսատիկին չես տեսել. խոտի միջից մի բարակ ձայն լուեց:

Այծամարդը շուռ եկաւ ու նկատեց լուսատիկին, որ խոտերի մէջ կանաչ կը ակի պէս լոյս էր տալիս և որոնում իւր ընկերուհուն:

— Քո լուսատիկին, մտածեց մի քիչ Այծամարդը: Այն, ինչպէս չէ, յիշում եմ... նա շատ ժամանակ չէ, որ սողաց դէպի տուն ու քո մասին էր հարցնում... դէ, քաշուիր գնա... Անտառում ձեր նմանները շատ կան, ամենըին չես կարող նայել...

— Շնորհակալ եմ քեռի...

Մառախուղը սկսեց հանդարտ բարձրանալ լճի վրայ ու երկնքում մէկը միւսի ետևից աստղերը հանգչել, կասես մի աներևոյթ ձեռք երկնքից նրանց պոկում լինէր. կկուն հեռուն կու-կու, կու-կու ձայներ էր հանում և այդ բանը Այծամարդի բարկութիւնը շարժեց: Այ քեզ բան, թոշուններն էլ փոխուել այլանդակուել են, գիշերներն էլ են կու-կու կանչում, ցերեկներն էլ:

— Դէ, քնելու ժամանակ է, եղբայր, վճռեց Այծամարդը, տեղից վեր կենալով: Ամենը ձեր տեղերը: Այ, լաւ: Հօ-հօ օ...

Եւ նա զնաց ու փոթորկից շուռ եկած մի եղենու տակ վայր ընկաւ ու մրավիեց:

Իսկ լուսատիկը սողալով, սողալով տուն հասաւ ու գտաւ իւր ընկերուհուն, որ անհանգիստ նրան էր սպասում:

Վ Ե Բ Զ



ՆՈՒԷՐ ՄԱՍՈՒԻԿՆԵՐԻՆ

| | |
|--------------------------------|----|
| 1 Վայրի կաքապներ (սպառուած) | 8 |
| 2 Առաջին վիշտ (սպառուած). | 10 |
| 3 Անտառապահը (սպառուած). | 12 |
| 4 Աշխէնն ու Մարզարիտը (սպառ.) | 10 |
| 5 Աղքատի բախտը (սպառ.) | 5 |
| 6 Գոհարիկն ու Աստղիկը (սպառ.) | 10 |
| 7 Մելլօն ու Պատրաշը (սպառուած) | 10 |
| 8 Գիւղում (սպառ.) | 20 |
| 9 Կենդանի է արդեօք | 8 |
| 10 Բարեկամներ (սպառ.) | 12 |
| 11 Առակներ ընական պատմովթինից | 12 |
| 12 Մազնիս | 12 |
| 13 Արջի պատմովթինը: Գայլը | 15 |
| 14 Ոզնիներ | 8 |
| 15 Թմ՛փիկը | 12 |
| 16 Լեռան աղջիկը (սպառ.) | 20 |
| 17 Բու | 12 |
| 18 Փոքրիկ Պարոյրի արկածները | 15 |
| 19 Փիղ | 8 |
| 20 Ռուգէնի գրալմոնը | 25 |
| 21 Որը Աննան | 12 |
| 22 Արցոնը | 15 |
| 23 Անձնազո՞ւ մանուկ. | 10 |
| 24 Դարեւոր կաղնի | 6 |
| 25 Խրամատի եղերքին | 10 |
| 26 Լուսատիկներ | 40 |

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին:



ՀՀ Ազգային գրադար



NL0391295

3965